

Դ. ՏԱՐԻ ՀԱԼԷՊ, 9 ՄԱՅԻՍ, 1931 ԹԻՒ 7-8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՐԸ

Տ. Ճ. Խ.

ԴԷՊԻ ԵՊՏ ԹԷ ՅԱՌԱԶ

ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԲՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԹՐԿ. Բ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ

ՓՐՈՓ. Լ. ԼԵՒՈՆՆԱՆ

ՓՐՈՓ. Ա. ՊԷԶՅԵԱՆ

ՏՈՔԹ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՔԼԷՄԱՆՍՆԵՐԸ

ԲԻԶԱՆԴ Մ. ԵՂԻԱԵԱՆ

ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ԱԹՈՌԱԿԻՑԻՆ ՕԾՄԱՆ ԱՌԹԻԻ

ՆԵՐԿԱՅ ՄԸ

1930 Ի ԳԻՏԱԿԱՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՄՆԵՐԸ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԲԻՄԻԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

Ֆ. ԷԶՐԱԳ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱԽԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
 BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՑ ՀԱԼԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Արսունասէր՝ Վեր. Կ. Յարուսթիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խրչոքեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգինն է 150 դրուշ
սուրի. Սուրբոյ համար, և մէկ ու կէս
տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն զըր-
կուիր եթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօդուածներու համար
պէտք է զրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, զիւրըն-
թեռնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԻՔ
«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-Ի

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն հա-
մարիւրաքանչիւր տողին գինն է 10 դրշ.
սուրիական. վեցամսեայ և աւելի եր-
կարատե ծանուցումներու պայմանները
հասկնալու համար գիմել «Նոր Աւետա-
բեր»-ի. B. P. 287, Alep.

ՆՈՒԷՐ “ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ,,Ի

Տիար Յ. Ս. Ֆերմանեան, Լոպանէն,
մէկուկէս տոլար: Թերթը յատկացուած
է Հալէպի Ուսումնասիրաց Վարժարա-
նին:

ՍՏԱՑԱՆՔ

ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ, բժշկական և Ա-
ռողջապահական ամսագրին Ա. տարի
թիւ 3-ը, ճոխ և շինիչ բովանդակու-
թեամբ: Բոլոր ընտանիքներու համար
յանձնարարելի է: Տէր և տնօրէն՝ Տոքթ.
Միհնան Կ. Քէչիչեան, բաժանորդա-
գրութեան պայմաններն են. Ֆրանսա,
Սուրիա, Թուրքիա և Պալքանները 40
ֆրանք: Միւս երկիրները 2 տոլար կամ
50 ֆրանք: Հասցէ. —

Dr. M. Kechichian
126, Rue Legendre, Paris (17^e)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐ-
ԿԻՍԵԱՆ որ քաղաքէս մեկնած է Ամե-
րիկա, կը փափաքի իր բարեկամներուն
յայտնել թէ Մ. Նահանգաց մէջ իր հաս-
ցէն պիտի ըլլայ,

c/o Dr. E. Sarkissian
62 North Duke St. Pa.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 9 ՄԱՅԻՍ, 1931

ԹԻԻ 7-8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Բ.

Ազգայնական հոսանքը, ընչպէս որ ըսած էինք թիւ 6 ի խմբագրականին մէջ, նախապատերազմեան ծագում մ'ունի, որ սակայն կրնայ վերջին 15 տարիներու միջոցին նոր թափ մը ստացած ըլլալ:

Առաջին ակնարկով իսկ դիտելի է որ զանազան երանգներ գոյն տուած են այս հոսանքին: Դասակարգ մը կայ, թէպէտ փոքրաթիւ, որ կը ջատագովէ Առաք. Եկեղեցիին հետ անմիջական միութիւն կամ ձուլում, այսինքն վերագարձ խոցոտեալ մօրը ծոցը: Այսպէս խորհողներէն ոմանք առաւել կամ նուազ չափով անտարբեր են կրօնական արժէքներու հանդէպ՝ նկատելով եկեղեցին զուտ ազգային, քաղաքական կազմակերպութիւն մը և հետեւաբար տարբեր եկեղեցիներու գոյութիւնը կը գտնեն փնասակար Հայութեան: Այս միտումը կրնանք կոչել կեղծ ազգասիրութիւն, որ իրաւունք չունի կրօնական արժէքներու մասին ճանելու և ուղղութիւն տալու:

Միութիւններէն ուրիշ դասակարգ մը թէպէտ կը յարգէ կրօնական արժէքները, և առաւել կամ նուազ չափով գիտակից է Առաք. և Աւետ. Եկեղեցիներու ինչ ինչ տարբերութեանց, բայց զանցառելի կը նկատէ գանոնք: Այսպիսիներ, սակայն, ինչպէս որ փորձը ցոյցուցած է, չեն կրցած Առաք. Եկեղեցիին մէջ մնալ, անհանգստութիւն պատճառելով թէ՛ իրենց և թէ՛ Առաք. Եկեղեցիին:

Միութեան պաշտպաններէն ուրիշ դասակարգ մը, թիւով շատ փոքր, մէկ կողմէն կը գաղափարակայնեն Առաք. Եկեղեցիին իսկ միւս կողմէն կը քննադատեն Աւետ. Եկեղեցիին: Անոնք՝ սնած և մեծցած աւետարանական մթնոլորտի մը մէջ՝ Առաք. Եկեղեցիին վարդապետութիւններն ու ծէսերը կը դիտեն իրենց ակնոցով, և անոնց կը վերագրեն այնպիսի արժէքներ զորոնք անոնց մէջ տեսնել կը կարծեն, բայց որոնք հոն գոյութիւն չունին: Իսկ միւս կողմէն Աւետ. Եկեղեցիին՝ իր սկզբնական ուղղափառ դաւանանքէն չեղած, արդիապաշտութեան հոսանքէն տարուած և բանապաշտութեան ծոցը ինկած կը նշկատեն: Այսպիսիներ գուրկ ըլլալով իրատես թափանցողութենէ՝ իրենց երեւակայած կամ փայփայած գաղափարները միայն կը կարգան Հայ կրօնական կեանքի մէջ, և հետեւաբար սխալ տեսութիւններ կը ներկայացնեն թէ՛ Առաք. և թէ՛ Աւետ. Եկեղեցիներու արժէքներուն մասին:

Ուրիշ դասակարգ մըն ալ կայ, որ զարձեւ կը փափաքի միանալ Առաք. Եկեղեցիին հետ, և սակայն պայմանաւոր ան բարեկարգութիւն: Ներկայիս՝ երբ բարեկարգութիւնը հրապարակային հրատապ հարցերէն մէկը եղած է՝ այս փափաքը աւելի զօրացած է: Անոնց երազն է ոչ թէ ձուլուիլ Առաք. Եկեղեցիին հետ, իր ներկայ վիճակին մէջ,

այլ ըստ Աւետարանի պահանջներուն բարեկարգեալ, հոգեւորապէս զօրաւոր, Հայց. Առաք. մէկ Եկեղեցի կազմել: Այս փափաքը շատ բնական է և գնահատելի: Բայց պէտք է ըսել թէ մինչեւ այսօր այս ուղղութեամբ զբիթէ բան մը չէ կատարուած: Մօտաւոր ապագան ցոյց պիտի տայ թէ բարեկարգութեան հարցը ինչպիսի ելքի մը պիտի յանգի: Մինչեւ այդ պէտք սպասել: Բայց հոս պէտք է յիշել թէ միայն միութեան սիրոյն համար պէտք չէ զոհել այն անփոխարինելի արժէքները, որոնց կը պարտի Աւետ. Եկեղեցին իր գոյութիւնը: Աւելի քան երբեք մենք պէտք ունինք գուրգուրանքով պահել մեր հոգեւոր ժառանգը, նոյն իսկ բոլոր հայութեան օգտին համար:

Կան չափաւոր ազգայնականներ ալ, որոնք նկատի առնելով երկու քոյր եկեղեցիներուն մէջ գանուող տարբերութիւնները ներկայիս անկարելի կը գըտնեն ունէ միութիւն մը, բայց որոնք կը խորհին թէ Աւետ. Եկեղեցին պէտք է աւելի հայանայ:

Մենք այս հարցը կը դիտենք բոլորովին տարբեր հայեցակէտէ մը: Որպէսզի ունէ շարժում կամ ունէ գաղափար զօրաւոր կերպով հաստատուի ունէ հաւաքականութեան մէջ և յաջող արդիւնքներ տայ պէտք է նկատի առնել անոր կեանքի պայմանները: Ժողովուրդի մը ցեղային ինքնայատկութիւնները, հոգեկան խառնուածքը, անցեալ պատմութիւնը, ներկայ բաղձանքներն ու իտէալները, անոր աշխարհագրական և քաղաքական պայմանները առանց նկատի առնելու անոր մէջ կամ անոր համար գործել յաջողութեամբ չի կրնար պսակուիլ: Արդ ոչ թէ պարզապէս ազգայնականութեան սիրոյն՝ այլ նոյն ինքն այդ շարժումին, գաղափարին կամ գործունէութեան յաջողութեան սիրոյն համար, պէտք է

այսպիսի ուղղութիւն մ'ունենալ: Ասիկա կը նշանակէ հարցը դնել օգտապաշտ, իրապաշտ գետնի մը վրայ:

Աւետարանականութիւնը նմանապէս՝ իր բարեկարգչական հոգեւոր ազդակ Հայ կեանքի մէջ՝ աւելի յաջող և զօրաւոր գործունէութիւն ունենալու համար պէտք է յիշեալ պայմանները նկատի առնել: Մասնաւորելով մեր խօսքը Աւետարանական հոգեւոր և կրթական գործիչներուն մասին՝ անոնք պէտք է հմտանան Հայ ազգային, եկեղեցական և մշակութային պատմութեանց: Ասիկայ պէտք է ոչ թէ անոր համար որ անոնք հայկական են, ոչ թէ ազգայնական զգացումին յագուրդ տալու համար, այլ իրենց պատկանած ժողովուրդը աւելի լաւ ճանչնալու և ըստ այնմ գործելու և երկրորդ հոն պահուած իրական և տեսական ժառանգէն օգտուելու համար: Եբբ մենք կ'օգտագործենք բոլոր մարդկութեան, մասնաւոր բոլոր քրիստոնէական եկեղեցիներու հոգեւոր և մշակութային գանձերը իրենց իրական արժէքներուն համար, պէտք չէ անտեսել դարերու միզի աւանդած հայկական հոգեւոր ժառանգը, իր ներքին արժէքին համար: Թէ ինչպէս, թերեւ առիթ ունենաք յառաջիկային խօսելու:

ՍՈՒՐԻՈՅ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս տարուան ժողովը տեղի ունեցաւ Հալէպ, Ապրիլ 8—15ին, մասնակցութեամբ 21 եկեղեցիներէ 14 ձեռնադրեալ հովիւներու, 10 քարոզիչներու և 21 պատուիրակներու: Այս թիւին վրայ աւելնալով 13 միսիօնարներ կազմուեցաւ համաժողովը:

Սուրիոյ մէջ մինչև հիմա գումարուած լաւագոյն ժողովն էր այս տարուանը: Մանրամասն տեղեկագիրը մօտօրէն պիտի յանձնուի մամուլի, որով աւելորդ կը նկատենք հոս աւելի խօսիլ այդ մասին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՊՔԸ

Յետպատերազմեան զաղութահայու թեան եկեղեցական կեանքին տմեան շանաւոր եւ ամենակարեւոր զէպքը, որուն Հալէպի հայութիւնը տկանատես ըլլալու բախտին արժանացաւ, Ապրիլ 25-28ին տեղի ունեցած Հայց. Առաք. Եկեղեցւոյ եպիսկոպոսական պատմական ժողովն է:

Ժողովին մասնակցեկան Կիլիկիոյ կաթողիկոսութեան հինգ թեմերէն եւ կած 35 կրօնական եւ աշխարհական պատգամաւորներ, բաց ի վեհ. Սահակ Բ. կաթողիկոսէ, նոր օծեալ Աթոռակից Բարգէն Ս. կաթողիկոսէ եւ Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանէ: Անթիլիասի Ընծայարանը կը ներկայացնէր Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Գասպարեան:

Այս պատկառելի ժողովը երկու կաբեւոր գործեր ունեցաւ: Աստուծէ առաջինն է աթոռակիցի ընտրութիւնը, յանձին Տ. Բարգէն Սրբազանի, որուն օծումը տեղի ունեցաւ Ապրիլ 26ին, Կիրակի առաւօտ, Ս. Բառաստուն Մանկանց աթոռանիստ պատմական Եկեղեցիին մէջ, այնքան շքեղ փայլով մը եւ մասնակցութեամբ կառավարական բարձր պաշտօնէութեան, քրիստոնեայ հասարակութեանց պետերուն եւ յոգնախումբ ղազմութեան: Երկրորդ գործը եղաւ, կրնանք ըսիլ, նախապատրաստական աշխատանք յառաջիկայ աւելի մեծ պատգամաւորական ժողովի մը, որ թերեւ տեղի պիտի ունենայ տարւոյս վերջին տմիսներուն մէջ:

Ժողովին օրակարգին վրայ բերուած նիւթերը իրենց բազմութեան եւ կարեւորութեան պատճառաւ իմաստուն կարգադրութեամբ մը յանձնախումբերու տրուած են: Ասոնք են Վիճակագրական, Վարչական, Եկեղեցական, Տնտեսական, Յարաբերական (տարբեր

եկեղեցիներու եւ կառավարութեանց հետ), Ընկերային եւ Կրթական: Ասոնք երեք ամիս ժամանակամիջոց պիտի ունենան պատրաստելու իրենց տեղեկագիրները:

Այս ժողովին առթիւ ուշադրութեան արժանի կէտերէն են. —

1. Գեր. Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանի ներկայութիւնը, իր պատկառելի եւ նոյնքան սիրելի եւ հեղահամբոյր անձնաւորութեամբը, պէտք է մեծ հաճոյքով արձանագրել:

2. Հակառակ ժողովին զումարումէն առաջ երեւան բերուած անպատեհ խափանարար խռովութեան՝ շնորհաւորելի են ժողովին ընթացքին տեսնուած համերաշխութիւնն ու լրջութիւնը:

3. Անթիլիասի մէջ Ընծայարանի սեպական մասնւոր մը հաստատութիւնը, եւ Պէյրութի, Եպսկոպիյէի եւ Հալէպի մէջ նոր եկեղեցական շէնքերու համար կատարուած նիւթական խոստումները եւ հանգանակութիւնը ուրախութեամբ արձանագրելի են:

4. Վեհ. կաթողիկոսին բացման ճառին ժողովին կողմանէ տրուած պատասխանին մէջ զարմանալի էր որ Կ. Դպրոցներու մասին սեւէ յիշատակութիւն չկար, եւ կաթողիկոսարանի հաստատութեան համար բարոյական եւ նիւթական շատ կարեւոր օժանդակութեան մէջ գտնուած Բիլիֆի (Մ. Ա. Հիմնարկութիւն) նման հաստատութիւն մը անունով չէր յիշուած, մինչ նուիրատու անհատներ մի առ մի յիշուած էին:

5. Մեծապէս շնորհաւորելի է Վեհ. Տ. Սահակ Բ. կաթողիկոս իր ցոյց տրուած շրջահայեաց իմաստութեան, կորովին եւ ազատամտութեան համար, որուն արդիւնքներէն են Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեւականացումը եւ անոր պայծառութեան համար առնուած

լուրջ քայլերը:

6. Վերջապէս շատ նշանակալից է Տ. Բաբգէն Սրբազանի իբր Սթոռակից Կաթողիկոս գրեթէ միաձայնութեամբ ընտրութիւնը: Նոր օծեալ աթոռակիցը իր հայրապետական պաշտօնին կը ձեռնարկէ պատրաստ ծրագրով Հայց. Առաք. Եկեղեցւոյ բարեկարգութեան համար: Անիկայ ոչ միայն ծրագիր մը ունի, այլ կորով եւ ձեռնհասութիւն ունի այդ ծրագիրը իրագործելու, եւ իր պատկառազգու առաջնորդութեամբը ժողովուրդը, ըսինք, պարտադրելու որ իրեն գործակցի եւ հետեւի: Այս ծրագիրը կը պարունակէ այնպիսի նութիւններ, որոնք մասնաւոր ազդեցութիւն պիտի ունենան եկեղեցին եւ ժողովուրդը ներքնապէս եւ հոգեւորապէս բարեկարգելու: Ասոնցմէ են Ս. Գրքին աշխարհաբար լեզուով ընդհանրացումը ժողովուրդին բոլոր խա-

ւերուն մէջ, Կ. Դպրոցի որդեգրումը, հոգեւոր քարոզութեան տրուած կարեւորութիւնը, նոր պատրաստուելիք եկեղեցականներու մէջ հոգեւոր կեանք մը յառաջ բերելու միտումը: Հոգեւոր բարեկարգութեան իբր սկզբնական քայլերը՝ ասոնք արժէք ունին, եւ կը յուսանք թէ անոնք երթալով աւելի պիտի խորոշեն, Քրիստոսի հոգին համեմատ, եւ պատճառ պիտի ըլլան որ Հայց. Առաք. Եկեղեցին ըլլայ Ս. Հոգիով մշտանորոգ կենդանի հաստատութիւն մը:

Այս առթիւ մենք եւս կուզանք անխառն հրճուանքով շնորհաւորելու Հայց. Առաք. Եկեղեցին իր արժանւոր իր հովուապետին ընտրութեան առթիւ, մաղթելով անոր երկնային տեւական առաջնորդութիւն եւ ոյժ իր պատասխանատու պաշտօնը գործադրելու մէջ:

ԴԵՊԻ ՅԱՌԱՋ ԹԷ ԵՏ

«ՄՕՐԸ ՎԷՐՔԸ ԶԷ ՍՊԻԱՅԱԾ»

«(Մայր Եկեղեցին եւ Հայ Բողոքականութիւնը)»

Գրեց՝ ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

Ա.

Կրօնական վէճերը, հարցերը եւ պառակտումները լուծելու համար հեղինակութիւն մը պէտք է: Բայց ինչ է այդ:

«Սիսն» ի յօդուածագիրը այս առթիւ իշխող հեղինակաւոր մարմինի մը կամ գլուխի մը պէտքը չեղտելով Բողոքականները Մայր Եկեղեցին ծոցը կը հրաւիրէ, իբր թէ իշխող գլուխ մը եղած տեղը երկպառակութիւն չ'ըլլար: Այս մասին իրեն համաձայն չենք: Որչափ վէճեր ծագած են իշխող պետ ունեցող եկեղեցիներու մէջ: ԻՇԽՈՂ ԳԼՈՒԽԸ ՔՐԻՍՏՈՍՆ է, պէտք է Անոր

հնազանդին: Թող սէրը թապաւորէ (Ա. Կորն. 13):

Քիչ մը վարը պիտի տանք Ներսէս Լամբրոնացիի ատենախօսութիւններէն մաս մը, որ յատկ կերպով կը ցուցնէ թէ իր դարուն մէջ եկեղեցիի պառակտումները յիշելով սիրոյ յորդոր կը կարգայ եւ կ'ըսէ թէ իշխող գլուխը պէտք է Աստուծոյ սէրը ըլլայ:

Ի՞նչ է վերքը: Իր զաւակներուն հեռացումը, բողոքական ըլլալը եւ բողոքական մնալն է: Ասիկա զեռ չէ բուժուած, այսինքն Բողոքականները իր փարախը դարձած չեն դեռ:

Անցեալ ամիս Սրբազան Պապն ալ բա-
տիոյով բարձր քրիստոնեաները կաթո-
լիկ եկեղեցիին փարախը կը հրաւիրէր։
Անոր սիրտին վէրքն ալ ահա նոյնն է։
Նոյնն է Անգլիոյ համար Ամերիկայի բա-
ժանումը։

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՐԲ Է ԶԱՅՆ ՄԻԱՆԳԱՄ
ԸՆԴՄԻՇՏ ՍՊԻԱՑՆԵԼՈՒ։ Ահա «Սիւն»ի
յօդուածագրէն կարեւոր կոչ մը։ Կ'ար-
ժէ զայն վեր առնել։ Ե՞րբ, ո՞վ Տէր,
հ՞րբ։ «Մէկ ըլլան», ազօթեց Յիսուս։

Բաժանման առիթ տուող պահանջներ
վերցան։ Սիրտեր անկեղծ սիրով իրարու
մօտեցան։ Մայրը իր բաժանեալ գաւ-
կին վրայ իբր իր հարազատը կը զուրգու-
րա՞յ։ Վէրքին բուժումը արտաքին չէ,
այլ ներքինն է։ Բուն վէրքը՝ սիրտի ցա-
ւընն է, քիտով եղած բաժանումն է,
միտքով եղած բաժանեալ վիճակն է։
Հարիւր տարի առաջ բաժնուած Բողո-
քականներուն հետ այսօր կան նաեւ
բողոքականներ Մայր եկեղեցիին մէջ։
Անոնք անուշով եկեղեցիին մէջ են,
սակայն դուրսը ապրողներ, եկեղեցիին
մէջ չմտնողներ, անառակ որդիին մեծ
եղբօրը նմաններ (Ղուկ. 15) են։ Անա-
ռակ որդին տունէն հեռու հօրը տունը
չմոռցաւ, «հա՛յր» ըսելով եկաւ, Մեծ
որդին ասոր նեղուեցաւ. անիկայ հայր
ու եղբայր բաւերը չի գործածեր։ «Այս
Քու որդիդ...» կ'ըսէ։ Որովհետեւ ներս
ընդունուեցաւ անառակը։ Ահա անու-
շով ներս եղող մեծ եղբայրը, բաժանե-
ալ՝ սրտով. սիրտի մեծ վէրքը հոն է։
Ինչպիսի ապիացնէրու է զայն։ Մեծ եղ-
բայրը, ա՛հ, դեռ կը մատնանչէ ու վեր
կ'առնէ պատիկ եղբօր վէրքերը. պատիկ
եղբօրը քով մանկու ու զայն համբու-
րելու համար տակաւին հօրը սիրտը և
զուրգուրանքը չունի։ Հայրը ուրախու-
թեան սեղանէն դուրս ելաւ մեծ որդւոյն
քով ու «կ'աղաչէր» անոր որ ներս գայ,
սիրէ եղբայրը ոգիով։ Նոյնը կ'ընէ,
հօրը գիրին մէջն է, ներսէս Լամբրո-

նացին։

Դեղագիր Ջո Ներսէս Լամբրոնացիին Մօ-
րը ու զաւակին սիրտերուն վերջեր ապիացը-
նէրու հաւատ։

1177 ին, Կիլիկիոյ Մայրաքաղաքը,
Տարսոն՝ եկեղեցական մեծ ժողով մը
գումարուեցաւ Լեւոն Թագաւորի և
Գրիգորիոս Կաթողիկոսի հրամանաւ։
Այն ատեն Ներսէս Լամբրոնացի Տար-
սոնի աթոռակալ Եպիսկոպոսն էր որ այդ
ժողովին Ս. Հայրապետներուն առջև ա-
տենախօսութիւն մ'ըրաւ, որուն մէկ
մասը կուտամ ստորեւ։ (Տես «Գիրք
Սիրոյ և Խաղաղութեան», ապեալ
1749 ին)։

«... Ինչ՞ու քրիստոնեաներս իրարմէ
խորշիմք... Մինչեւ երբ անդամներս
լիզուաւ զիրար խոցոտեմք... Քննեցէք
եղբայրներս այս՝ թէ այս թշնամութիւ-
նը Աստուծոյ օրէնք է... Այսօր բար-
ձաւ պատկառանքը և տիրեց իրարու
դէմ արհամարութիւն և ամէնն հերետի-
կոսներ եղան։ Հերետիկոս կը թարգ-
մանի հերձուածող, կը նշանակէ պա-
ռակտեալ։ Ահա կը տեսնենք թէ ի-
րարմէ հերձեալ են... Արդ՝ այժմ ի-
րարմէ հրաժարելու օգուտ մը չունի, կամ
անհնազանդը չհաղորդելն օգուտ մը
չունի... Արդեօք խորշիկովդ մէկը
ուղղութեան կրնա՞ս բերել, բայց միայն
սիրով և խոնարհութեամբ և Քրիստոսի
հեղութեան և մարդասիրութեան օրէն-
քով։ Նա որ իր արարիչն էր՝ ոչ-կամե-
ցաւ բռնութեամբ և սաստեղծով ուղղել,
զիչէր հնար։ Իսկ զուն Քրիստոսէ աւե՞-
լի խելացի ես։ Կ'ըսէր Կաթողիկոս իսկ
հրաւիրեալ։ Սէրը միայն զայն կը նուաճէ։
Ինչո՞ւ սնտոի կարծիքի համար իբրեւ
պիղծեր իրարմէ հրաժարինք. ի՞նչ է ա-
նոր պղծութիւնը։ Ո՛չ վարք, ո՛չ գործք,
այլ զի զՔրիստոս Աստուած ու մարդ
խոստովանիմք։ Ի մի հաւատ կալով եր-
կուց կողմանցն, վասն բռնից ու բառից
զմիմեանս պիղծ համարեմք։ Վայ մեզ

ի յանաչառն ատենի՝ աչառանօք ատե-
լութեան՝ օրինաց սիրոյն արհամարհո-
ղացն... երկիւղ խառնե քո մեջդ: Հասաւ
ժամանակը իմաստուն երկրագործնե-
րուդ Քրիստոսի եկեղեցւոյն այգին յօ-
տելու և զայն սրբելու ի սաղարթիցս
աւելորդաց:»

Ինչ ճոխիմաստ շնորհալի հայրա-
կան խրատ ամէն դարու:

Ահա ի. դարու «Սիւն»ի կոչին պա-
տասխանը՝ ասկէ 750 տարի առաջ Լամբ-
րոնացիէն տրուած մեծ Սինոտին Ս.
Հայրապետներուն առջեւ: Եթէ 1845
ին ազգային եկեղեցիին զլուսը ներսէս
Լամբրոնացի մը ըլլար, Բողոքական բա-
ժանումը երբեք տեղի պիտի չունենար:
Եթէ այսօր Լամբրոնացիին դեղագիրը
գործածենք վէրքը «մի անգամ ընդ միշտ»
կ'սպիանայ: Օ՛ն, ի ԳՈՐԾ: «Հասաւ ժա-
մանակը իմաստուն երկրագործներուդ,
այգին յօտելու և սրբելու ի սաղարթիցս
աւելորդաց:»

Եսմէրս, Ն. Ե.

Մարտ 25

(Շար.)

ԴՆԴԱՊԵՏ ԼԻՆՏՊԵՐԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Լինտպէրկ, որ Նիւ Եորքէն Փարիզ
կատարած իր թռիչքովը և այդ առթիւ
ցոյց տուած բարոյական բարձր յատ-
կութեանց համար աշխարհածանօթ
դէմք մը և Ամերիկայի երիտասարդու-
թեան հերոսը դարձած է, իր կեանքին
գաղտնիքը կը պարզէ իր մէկ գրութեան
մէջ, ուր կը կարդանք.

«Ես սա եզրակացութեան եկայ որ
եթէ ես բան մը չիտակ կերպով ընելու
և սխալ կերպով ընելու տարբերութիւնը
գիտնամ պէտք է ինքզինքս մարդեմ
միշտ չիտակը ընելու համար: Այսպէս
նկարագիրը կազմող ազդակներու մէկ
ցանկը շինեցի: Գիշերը այս ցանկը կը
կարդայի և կարմիր խաչ մը կը դնէր ա-
նոնց առջեւ զորոնք գոհացուցիչ կերպով

կատարած էի ցերեկին: Ուէ նշան չէի
դներ անոնց առջեւ, զորոնք կատարելու
պատահութիւն ունեցած չէի: Իսկ սե
խաչ մը կը դնէի անոնց առջեւ զորոնք
զանցառած, անոնց հակառակ գործած
էի: Սակայն օրէ օր ինքզինքս զսպեցի,
ամէն ամսուան և ամէն տարուան սե-
ւերը և ճերմակները նախկիններուն
հետ բազդատեցի: Եւ քանի կը մեծնա-
լի ուրախութեամբ կը տեսնէի բար-
ւոգումը:»

Այդ ցանկն է հետեւեալը:

Խնայողութիւն	Ոյժ
Այլատիրութիւն	Յոյս
Մեծարադձութիւն	Սրգարութիւն
Ամփոփ խօսիլ	Դատողութիւն
Կեդրոնացում	Համատեղութիւն
Մաքուր մարմին	Վայելչութիւն
Մաքուր լեզու	Զհեգնել
Մաքուր վարք	Հաճելի ձայն
Անվախութիւն	Եռանդ
Զփաստաբանիլ	Հաւատք
Յանցանք չգտնել	Ինքնահամարում
Մաքուր մտածում	Անանձնասիրութիւն
Զուարթամտութիւն	Յարգել հայրենիքը
Հաստատամտութիւն	Յարգել ընտանիքը
Շնորհալիութիւն	Յարգել ծնողները
Պարկեշտութիւն	Լման կատարել
Հնարամտութիւն	Քուէն և հանգիստ
Նախաձեռնութիւն	Ինքնազսպում
Ամէն ոք սիրել	Կարեկցութիւն
Հաւատարմութիւն	Անկեղծութիւն
Զափաւորութիւն	Ինքնավստահութիւն
Լաւատեսութիւն	Քաղաքավարութիւն
Յարատեսութիւն	Վարուսողութիւն
Մարմնամարզ	Երկիւղածութիւն
Ճշգրտագուցութիւն	Ուրիշներու մասին չխօսիլ
Համբերութիւն	Հանդարտաբարոյութիւն
Վճռականութիւն	Մեծարել ընկերակից և գերադասները
	Պատրաստամտութիւն համաձայնելու
	Զրօսանք — «պատուաւոր, ոչ մեղաւոր»

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

9. ԺԱՄԱՆԱԿԱՌ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՐԱՆՔԸ ՆԵՐԿԱՅ ՄԱՐԴՈՅՄԷ

ԿԸ ՀԵՌԱՅՆԷ ՃՇՄԱՐԻՑ ԿԵԱՆՔԸ

Կրեց՝ ՁԷՐԹՐՈՎ

Թրգմ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Մարդը իծնէ ունի այնպիսի կեանքի մը ծանօթութիւնը, որ ձեռք կը բերուի Հօրը կամքը կատարելով եւ անոր համաձայն ապրելով: Տղաք այս ծանօթութեամբ կ'ապրին: Անոնց մէջ կըլնանք տեսնել Հօրը կամքին էութիւնը: Յիսուսի վարդապետութիւնը հասկնալու համար, հարկ է մանուկներու կեանքը հասկնալ եւ անոնց նմանիլ: Մանուկները կ'ապրին Հօրը կամքին համաձայն, առանց հինգ պատուիրանները կոտորելու: Անոնք չպիտի կոտորէին այդ պատուիրանները, եթէ մեծերը սխալ չառաջնորդէին զիրենք: Սխալ առաջնորդութիւն մը կը կոտորէ այս հինգ պատուիրաններու կատարումը, որով կ'աւրուին տղաք:

Եթէ գայթակղութիւններ չըլլային աշխարհ երջանիկ կ'ըլլար: Աշխարհի ապերջանկութեան միակ պատճառը այս գայթակղութիւնն է:

Գայթակղութիւնները սխալ գործեր են, որ կը կատարուին կեանքի երեւակայական շահերուն համար եւ կ'աւրեն: Ուստի աւելի լաւ է մէկ անգամէն կըտրել տեւէ զայրակողութեան միջոց, քան մեքը իյնալ: Գայթակղութիւնը կ'առաջնորդէ ինքզինքը իրաւացի նկատելու ուրիշներու դէմ եւ անով կը գործէ Առաջին պատուիրանին՝ Մատթ. Ե. 21-26՝ դէմ: Ասկէ զատ ուրիշները անիրաւ հանելով զանոնք պարտական կը հանէ: Այս գայթակղութիւնը խափանելու համար պէտք է յիշել թէ՛ բոլոր մարդիկ հաւաստեալ պէս պարտական են Հօրը եւ թէ՛ այս պարտքէն միմիայն եղբայր—մարդոց ներելով կարելի է ազատիլ:

Ուստի պէտք է ներել նմաններու յանցանքները եթէ նոյն իսկ յանցաւորը կրկին ու կրկին անգամ վնասէ անոնց: Մարդ որքան ալ անիրաւուի պէտք է ներէ եւ ըլլայ անյիշաչար այսինքն մոռնայ անոնց սխալը, քանզի երկնից թագաւորութիւնը շնորհք է: Եթէ չներենք ըրած կ'ըլլանք այն պարտականին պէս, որը մանր պարտքի տակ ըլլալով եկաւ անոր, որուն իշխանութեան տակ էր եւ շնորհք հայցեց: Տէրը ամէնը ներեց իրեն: Ինք գոհ մեկնեցաւ, բայց սկսաւ նեղել իր ծառայակիցը, որը ջնջին բան մը պարտական էր իրեն:

Արդ՝ կեանքը շահելու համար Հօրը կամքը կատարելու ենք: Մենք կ'աղօթենք Հօրը, որ մեզի ներէ, քանի որ չենք կրցած իր կամքը լման կերպով կատարել եւ կը յայտնենք թէ ներումի պիտի արժանանանք: Եթէ մենք մեր պարտականներուն չներենք, ըրած կ'ըլլանք այն ինչ որ մեզի համար զարհուրելի պիտի թուէր:

Հօրը կամքը բարի է, եւ ամէն ինչ որ մեզ Հօրմէն կը զատէ՝ մեղք է:

Երկրորդ պատուիրանին՝ Մատթ. Ե. 27-28՝ դէմ մեղանչել է կիրն իբր մարմնական հաճոյքի առարկայ նկատելու եւ կիրն թողելէ ետք ուրիշ մը առնելուն մէջ բարձրագոյն հաճոյք փնտռելը: Ասոր դէմ չմեղանչելու համար պէտք է յիշենք թէ Հայրը չի կամիր, որ կնոջ հրապոյրով զբօսնունք, այլ անոր հետ մէկ մարմին ըլլանք: Հայրը մէկ մարդ՝ մէկ կնոջ եւ մէկ կիրն մէկ մարդու կը կամի: Ուստի ով որ իր կիրնը կը փոխէ, այսինքն զայն ամուսինէ. կը զրկէ, կը

մոլորեցնէ ուրիշ մը, որպէսզի իր կիներ թողու և լքուածը առնէ: Ուզողը կրնայ առանց կնոջ կամ ամուսինի ապրի:

Երրորդ պատուիրանը ամփոփուած է Ե. 33—37 ի մէջ: Ասոր դէմ մեղանշել է մարմնաւոր կեանքը պահպանելու համար հեղինակաւոր ուժի հաստատելը և մէկմէկէ երզումներ և երաշխաւորութիւններ պահանջելը և ընել տանապիտի գործեր, որ այդ ուժերը կը պարտադրեն: Ասոր դէմ պաշտպանուելու համար մեր կեանքը Աստուծոյ վաստ ոչ մէկ ուժի պարտելու ենք: Իշխանութեան բոլոր պահանջները՝ ստացուածք և աշխատանք՝ տալու ենք, սակայն անոնք ոչ երգումով և ոչ խոստումներով կրնան երաշխաւորել իրենց տնտեսութիւնը: Երգումներու գրութիւնը հաստատելով մարդը ստորնացուցած է:

Երբ մարդիկ կարծեն թէ ինքզինքն ին տալու թեան և վրէժխնդրութեան տալով պիտի կրնան չարը իրենց մէջէն արտաքսել՝ կը մեղանշեն չորրորդ պատուիրանին՝ Մթ. Ե. 38—42 ի դէմ: Եթէ մէկը անիրաւ է, մարդիկ կը կարծեն թէ՛ պէտք է պատժել զայն և թէ արդարութիւնը մարդկային գատատանին մէջ է: Սակայն պէտք է յիշենք թէ՛ մարդիկ կոչուած չեն զիրար դատելու, այլ մէկմէկ պահելու: Մարդիկ անկարելի է որ ուրիշներուն անիրաւութիւնները դատեն արդարօրէն, քանզի իրենք անձնապէս թերութիւններով լեցուն են: Միակ ճամբան, որ մարդուն առջև բաց է, անձնական օրինակով՝ բարութիւն, մաքրութիւն և ներողամտութիւն ուսացնելու ճամբան է:

Հայրենակիցի և օտարի միջև դրուած խտրութիւնը մեղանշում է հինգերորդ պատուիրանին՝ Մատթ. Ե. 43-47՝ դէմ: Մարդիկ կը կարծեն թէ՛ տնհրաժեշտ է ուրիշ ազգերու դէմ ամբութիւններ չի-

նելը, անոնց վնասելը, սակայն պէտք է գիտնալ թէ բոլոր պատուիրանները միացած են այն մէկին՝ սիրոյ՝ մէջ: Հօրը կամքին խտացումն է ան:

Հայրը կեանք ու բարօրութիւն կուտայ բոլոր մարդոց անխտիր: Նոյնը ընելու ենք մենք, առանց զանազանութիւն զննելու, նոյնիսկ իր ազգին հետ պատերազմող ազգին անհատներուն:

Մարդկային ոնէ խաբէութեան յառաջացումը արդիւնէն համար, պէտք է խորհինք հոգեկան կեանքի մասին և ոչ թէ մարմնական գործերուն վրայ: Ով որ կ'ընդունի թէ կեանքը ճիշդ այն վայրկեանին չօրը կամքը կատարուելուն մէջ կը կայանայ՝ ո'չ գրկանք է, ո'չ նեղութիւն է և ո'չ ալ մահէ կրնայ զարհուրիլ: Ան որ իր ֆիզիքական կեանքը գոհեղու պահանջ է, ՄԻՄԻԱՅՆ Հօրը կանխը կասարկու համար, առանց ժամանակի ու տեղի զանազանութեան, կը շահի ճշմարիտ կեանքը:

Թիսուս ճշմարիտ կեանքի ըմբռնումը՝ որուն մէջ մահ չկայ՝ հասկնալի դարձնելու համար բոլոր. «Յաւիտենական կեանք ներկայ կեանքին նման չի հասկնուիր: Հօրը կամքի կատարումին պայմանաւորուող ճշմարիտ կեանքին մէջ ո'չ ժամանակ և ո'չ միջոց կայ: Իր կամքը կատարողները, իր հետ կ'ապրին: Անոնք մեզի համար կը մեռնին, բայց Հօրը համար կ'ապրին»:

Ու աւելցուց. «Կեանքի այս աղբիւրը ճիշդ նոյն Բրիտանիան է, որուն դուք կ'ապաստիք, կեանքի այս աղբիւրին շնորհակալ, որ մարդոց մէջ ոչ մէկ խնամիր, ոչ ժամանակ և ոչ տեղ կը ճանչնայ, Որդին Մարդոյ է զոր կ'ուսուցանեն: Ամէն ինչ որ կեանքի այն աղբիւրը կը ծածկէ մարդոցմէ, գոյթակալութիւն է: Ահա թէ ուր կը կայանայ դպրոցներուն, գրագէտներուն և նիւթապաշտներուն մեղանշումը: Անոնց մի հետեւիր: Հոն է նաև իշխանութիւն-

ներուն մեղանշումի կէտը: Մի հետեւիւր անոնց: Հոն է նաև ինքզինքնին կրօնի ուսուցիչ կոչող աստուածաբաններու սխալը: Չգուշացիր այս վերջիններէն աւելի՝ քան առաջիններէն: Քանզի ճիշդ ասոնք, այս ինքնաձեռնագրուած ուսուցիչները, սուտ Աստուծոյ մը երկրպագութիւնը ստեղծելով՝ ճշմարիտ Աստուծոյն կը հեռացնեն զքեզ: Անոնք՝ գործերով կեանքի Հօր ծառայելու փոխարէն, բառեր կ'ուսուցանեն առանց դրական գործ մը կատարելու: Ատոր համար բառերէ զատ ոչինչ կրնան սովորեցնել, քանզի իրենք բան մը չեն գիտեր: . . . Պէտք է գիտնալ թէ ոչ՝ մէկ միտք կրնայ ուրիշի մը ուսուցիչ ըլլալ: Բոլորին համաք մէկ ուսուցիչ միայն կայ և այն՝ կեանքի Տէրն է: Ինքզինքնին ուսուցիչ ենթադրողները, ուրիշներուն վարդապետել կարծելով, ինքզինքնին ճշմարիտ կեանքէն կը զրկեն և կ'արգիլեն, որ ուրիշներն ճշմարիտ կեանքը հասկնան: Անոնք կ'ուսուցանեն թէ Աստուծոյ կը հաճոյանայ ծէսերէ: Կրօնի արտաքին ձևակառուութիւնները կը զոհացնեն զիրենք,

սակայն հոգ չեն ըներ մարդոց ներքինին: Անոնք կը նմանին գեղակերտ դազազներու: Դուրսէն խիստ գեղեցիկ, բայց ներսէն ապականութեամբ լեցուած: Անոնք միայն խօսքով պատիւ կուտան սուրբերու և մարտիրոսներու, բայց իրենք նոյն մարդիկն են, որ սպաննեցին ու չարչարեցին զանոնք անցեալին եւ որ այսօր իսկ կ'սպաննեն ու կը չարչարեն անոնց նմանները: Սշխարհ անոնցմով կը մոլորի, քանզի բարի պիտակին տակ չարը կ'ուսուցանեն: Իրենց ցոյց տրուած մեղանշումը՝ հիմն ու արմատն է միւսներուն, քանզի անոնք կ'աղարտեն ամենամաքուր սրբաւորն անգամ: Տակաւին երկար ժամանակ պիտի չփոխուին: Պիտի շարունակեն իրենց խաբէութիւնները եւ աշխարհի մէջ մեղքը պիտի շատցնեն: Սակայն պիտի գայ ժամանակ, երբ բոլոր տաճարներն ալ պիտի քանդուին իրենց բոլոր ձեւական աստուածապաշտութիւններով եւ բոլոր մարդիկ պիտի հասկնան զիրար ու սիրով պիտի միանան ծառայելու կեանքի Հօրը, Անոր սուրբ կամքը կատարելով:»

ՓՐՈՖ. ԱԼԵԿՍԱՆ ՊԵՋՃԵԱՆ

Հ. ԿՈՉՆԱԿ շարունակելով վերջին 30 տարիներու միջոցին մեծագոյն 10 Հայ դիմաւորում մասին իր յօդուածաշարքը կը հրատարակի Փրոֆ. Պեգճեանի մահուան առթիւ ողբասցիալ Տոմար. Ս. Գարրիէլեանի գրութիւնը գոր կ'արտաստեմք մոլորեալք: Մ. Խմբ.

Հայ ցեղին արդի մտաւորական յեղաշրջումին աշխատասիրներու մէջ ամենաբարձր տեղ մը ունի Ալեքսան Պեգճեան:

Մեր խաւարակուտ Արեւելքի մէջ սկսաւ նա իր դաստիարակի ասպարէզը 1857-ին եւ շարունակեց 56 երկար տա-

րիներ:

Յիսուսովեց տարի առաջ մեր մէջ վարժապետները սակաւաթիւ էին, եւ ասոնք ալ մեծ մասամբ զբաղած էին ուսուցանելու բաներ, զորս իրենք ալ չէին գիտեր, այսինքն առանց ուսած ըլլալու գիտէին, եւ կ'ուսուցանէին առանց սորվեցնելու:

Պեգճեան զիտէր: Ուսած էր նախ ի Կ. Պոլիս Պէպէքի Ամերիկեան ճեմարանը (1852-56), յետոյ Ամերիկա, եւ յի համալսարանը (1872-74): Ինքը եղաւ Պոլսէ դուրս բնական գիտութեանց առաջին տարածիչը: Թրքահայոց մէջ

բնագիտութեան, տարրաբանութեան եւ երկրաբանութեան ամենէն հմուտ վարպետն էր Պէզգճեան եւ ամենեւնի յաջող ուսուցիչը:

Ոչ միայն քաջ գիտէր, այլ եւ ուսուցանել գիտէր: Գիտութեան օրէնքները այնքան մտերմօրէն կը ճանչնար, եւ այնպիսի յստակ ու պարզ լեզուով մը կը բացատրէր որ ամենէն հասարակ ժամացականութիւններու անգամ հասկնալի եւ հետաքրքրական կ'ընծայէր զանոնք: Քիչ մը ուղեղ ունեցողներն իսկ շատ բան կը սորվէին իրմէ:

Բայց յոկ ուսուցանող մը չէր Պէզգճեան, այլ էր նաեւ դաստիարակ, բառին բարձրագոյն առումովը: Ինքը կ'աշխատէր Հայ երիտասարդներն ոչ միայն գիտուն ընել այլ եւ մարդ: Ինքը Պէզգճեան մին էր այն գիտուններէն որ մարդ են, եւ մին այն մարդերէն որ քրքրատունեայ են: Նա գիտութեան եւ եւ հաւատքի մարդը միանգամայն էր: Կը ճանչնար շատ մօտէն զգիտուն եւ զմաթեմատիք Աստուածը: Եւ այդ բընազէտ Աստուծոյ մէջ կը ճանչնար նաեւ Հայրը սիրոյ: Հայրը որ կը գուրդուրայ տիեզերքին վրայ եւ որ նիւթական աշխարհին մէջէն իրեն կը կանչէ մարդկութիւնը: Իրեն կը քաշէ պաւակները: Ու այդ Աստուածը կը քարոզէր իր սաներուն բանիւ եւ գործով:

Փրոֆ. Պէզգճեան Կեդրոնական Թիւրքիոյ Գոլէճին ոչ միայն մեծագոյն գաստիարակը եղաւ, այլ եւ անոր հիմնադիրներէն մէկը: Մեծամիտ Թրօպրիճը եւ մեծահոգի Պէզգճեանը եղան այդ լուսոյ վառարանին հայր ու մայր: Թրօպրիճ մեռաւ (1888) եւ Պէզգճեան մնաց անվատ ու անձնուէր որ անհուն գործով եւ անսպառ անձնութեան զգրկած պահպանեց ու մեծցուց այս հաստատութիւնը: Միւս ուսուցիչները, ոմանք յոյժ գիտուն, որք հետզհետէ հասան իր օգնութեան, իր նախկին ա-

շակերտներն էին: Հաւագոյններէն ոմանք հեռացան կամայ թէ ակամայ, բայց Պէզգճեան մնաց անոր յարած եւ փարած իրրեւ իր սրտի հատորին, եւ ծանօթ բոլոր քաղաքական փոթորիկներու եւ ազգային խռովութեանց մէջ գիտցաւ ինքզինքը զսպել, որպէսզի գոլէճը անվտանգ մնար: Պէզգճեան կատակախօս եւ ծիծաղատէր երեւոյթին տակ կը ծածկէր ամենէն շրջահայեաց զգոն նկարագրեր: Հովերէ չէր տարուբերեր: Մեծ գործեր ի գլուխ հանելու կարող մեծ մարդերու կարգին կը պատկանէր:

Իր հիւանալի համբերութեան եւ ներքին ու արտաքին տանջանքներուն վարձքը լիովին առաւ այս մեծ Հայը: Իր հայրենասիրութիւնը կայացաւ հայրենաշինութեան մէջ: Մարդ հասցուց: Հազարէ աւելի են իր աշակերտները որոնց մէջ չեն պակսիր ուսուցիչի, քարտիչի, բժշկի, ազգային առաջնորդի, մատենագիրի գերազանց տիպարներ: Իր աշակերտները միայն Այնթապէն, Մարաշէն կամ Կիլիկիայէն չէին, այլ փոքր մասոյ շատ մը քաղաքներէն: Եթէ Պէզգճեան յաջողեցաւ, եւ աներկբայ գիտեմ որ յաջողեցաւ, իր աշակերտաց զէթ փոքրամասնութեան հաղորդել գիտական ոգի եւ ճշմարտութեան սէր, եւ ներշնչել անոնց բարոյական իտէալի պաշտամունքը, բնական օրէնքները ճանչնալու եւ գերբնակ ըլլալու իղձը, գիտութեան եւ հաստքի մարդ ըլլալու տենչը, պէտք է հռչակել թէ իրն եղաւ ամենէն հոյակապ եւ ամենէն արդիւնաբեր դաստիարակի ասպարէզը մեր ազգին մէջ: Բարոյական, ներքին անկապտելի ազատութիւնը, ազատութիւններու ամենէն իրականն է, եւ լուսոյ պըսակը որով Պէզգճեան զարդարեց այնքան երիտասարդներու զլուսը պսակներու ամենէն ճշմարիտը: Պատկառանքով, սիրով եւ հիացումով կը նայիմ ես Պէզգճեանի մեծ ու անմահ զէմքին:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ

Գրեց՝ ՓՐՈՑ. ԼՈՒԹՅՈՒ ԼԵՒՈՆԵԱՆ

Եկեղեցիի մասին երկու հիմնական
 եւ իրարմէ տարբեր կարծիքներ կան։
 Մէկը կ'ընդունի թէ եկեղեցին Քրիստոսի
 կողմէ հաստատուած կազմակերպութիւն
 մըն է որուն բանալիները յանձնուած
 են Ս. Պետրոսի կամ միւս առաքեալներ-
 րուն, և թէ անոնց կողմէ ալ՝ կղերա-
 կան զառակարգին, որ ձեռնադրութեան
 միջոցաւ մինչեւ այսօր անընդհատ կը
 շարունակէ։ Միւսը կը հաւատայ թէ
 ուր որ երկու կամ երեք հոգի Քրիստոսի
 անուանով մէկտեղ հաւաքուին Քրիստոս
 հոն ներկայ է, և թէ եկեղեցին հաւա-
 տացեալներու ընկերակցութիւն մըն է։
 Զբաղեալ միտք չունինք թէ այս կար-
 ծիքներէն որը ճիշտակ է և որը սխալ։
 Ամէն եկեղեցիի համար իր կարծիքը
 նուիրական է։ Սակայն սա ըսել կ'ու-
 ղենք թէ առաջինին մէջ կարեւոր բանը
 կազմակերպութիւնն է, կղերն է, և
 եկեղեցական սինոտներն են։ Իսկ երկ-
 րորդին մէջ կարեւոր բանը անհատին տ-
 զառութիւնն ու հոգեւոր կեանքն է։
 Հետեւաբար առաջինը կղերն ու սինոտ-
 ները գերիշխան զիւրքի մը վրայ դը-
 նելով կը պահանջէ որ ամէն անդամ հը-
 պատակի անոնց գրի առած որոշումնե-
 րուն և հաւատոյ հանգանակներուն։
 Իսկ երկրորդը այս տեսակէտով ամէն
 մէկ անդամը ազատ կը թողու և եկեղե-
 ցիի անդամակցութեան իրը հիմ կ'ըն-
 դունի Քրիստոսի հետ անձնական և
 կենդանի յարաբերութիւնը։ Ըսել էնք
 ուզեր թէ առաջինին մէջ հոգեւոր
 կեանքը զանց կ'առնուի և երկրորդին
 մէջ հաւատոյ հանգանակները մէկզի
 դուրսելով կ'անտեսուին։ Ո՛չ, առաջի-
 նին մէջ կեանք եւ երկրորդին մէջ հա-
 վատոյ հանգանակ կայ։ Սակայն տու-
 չինին մէջ կարեւորագոյնը հանգանակ-

ներն ու գաւանանքներն են, իսկ ան-
 ձնական կեանքը երկրորդական է։ Իսկ
 երկրորդին մէջ առաջին տեղը կը զբա-
 ւէ անձնական և հոգեւոր կեանքը, և
 գաւանանքներն ու հանգանակները երկ-
 րորդ տեղը կը զբաւեն։ Առաջինը ե-
 կեղեցիին ծոցը մտնել ուզողին կը հար-
 ցնէ. «Կը հաւատա՞ս այս հաւատոյ
 հանգանակին եւ այս գաւանանքին
 տառացիօրէն։» Իսկ երկրորդը կը հար-
 ցնէ. «Պիտե՞ս Քրիստոսի հետ անձնա-
 կան հոգեւոր կեանքը։» Ահա հոս է
 տարբերութիւնը, և այս տարբերու-
 թիւնը բնական է։ Եթէ եկեղեցին էա-
 պէս կղերին իշխանութեան ենթակայ
 կազմակերպութիւն մը նկատուի, այդ
 պարագային հաւատոյ հանգանակնե-
 րուն տառացիօրէն հպատակութիւնը
 պարտաւորիչ կը դառնայ։ Մինչդեռ
 եթէ եկեղեցին նկատուի հաւատացեալ-
 ներուն Քրիստոսով Միութիւնը, այդ
 պարագային անձնական հոգեւոր կեան-
 քը բարձր տեղ մը կը զբաւէ, և հան-
 գանակները կը կորսնցնեն իրենց ոյժը։

Ժողովական եկեղեցիները եկեղեցին
 կ'ըմբռնեն և կ'ընդունին այս երկրորդ
 իմաստով։ Ժողովականութիւնը հիմ-
 նուած է գաղափարի ազատութեան և
 կեանքով Քրիստոսի հետ միութեան
 սկզբունքին վրայ։ Ահա թէ ինչո՞ւ
 ժողովականութեան մէջ իշխանութեան
 և հեղինակութեան տէր եկեղեցական
 սինոտ մը չկայ։ Ամէն եկեղեցի ազատ
 է, և նոյնիսկ ամէն եկեղեցիի մէջ ամէն
 անդամ ազատ է։ Արդ, ժողովակա-
 նութեան մէջ ի՞նչ է այն կապը որ ան-
 դամները իրարու կը միացնէ։ Երբ
 չկայ հեղինակութեան և իշխանութեան
 տէր մարմին մը արդիւնք խառնակու-
 թիւն և քաոս չ'ըլլա՞ր։ Այս հարցումը

բնական կերպով մտքին կը ներկայանայ:

Ժողովականութեան մէջ անդամները իրարու միացնող կապը արտաքին հեղինակութիւն մը կամ ոյժ մը չէ, այլ ներքին և հոգեւոր հեղինակութիւն մըն է: Քրիստոս եկեղեցիի կենդանի գլուխն է և ամէն անդամ Քրիստոսի մարմինին մէկ անդամն ըլլալով հանդերձ միաս անդամներուն կը միանայ: Ամէն անդամ ազատ է. սակայն ի Քրիստոս միւս անդամներուն միացած է: Ամէն ճիւղ զատ է, սակայն ամէնը նոյն որթին միացած են: Այս անդամներէն և ճիւղերէն ոչ մէկը միւսին կը նմանի, սակայն բոլորին վրայ միեւնոյն գլուխը կ'ընկնէ, և միեւնոյն կենդանի ջուրը շրջան կ'ընէ բոլորին մէջ:

Ժողովականութեան մէջ եկեղեցիի անդամակցութիւնը կազմակերպական միութիւն կամ հաւատալիքներու միութիւն չէ, այլ հոգեւոր կեանքի միութիւն է: Ու ճշմարիտ միութեան համար անկէ զատ ուրիշ ճամբայ չկայ: Մեծ Ռուսիան մէկը աչքերուն առջևն է: Ռուսիոյ մէջ էր արտաքին հեղինակութեան վրայ հիմնուած ամէնէն զօրաւոր եկեղեցական կազմակերպութիւնը: Ռուսիոյ մէջ եկեղեցին ձարերու ոյժին վրաստահելով կրցած էր մէջտեղ բերել լեկ մարմին, լեկ եկեղեցի: Սակայն այսօր ամէնէն խառնակ եկեղեցին Ռուս Եկեղեցին է: Ահա բուն քառսը հոն է: Չը խաբուինք, զօրաւոր եկեղեցական հեղինակութիւնը, կատարեալ և վերջնական հաւատոյ հանգանակները չեն կրնար եկեղեցիի մէջ միութիւն հաստատել և պահպանել: Եկեղեցին էապէս հոգեւոր կազմակերպութիւն մըն է և հոգեւոր կեանքի վրայ հիմնուած է: Եկեղեցին տկուժ մը չէ, և չի կրնար ակումբի սկզբունքներով քալել, կազմակերպութիւն մը մէջտեղ բերել, և հաւատոյ հանգանակ մըն ալ ամէն անդամի

վրայ պարտադրել, միութիւն պահելու համար կրնան կարճ ու կտրուկ ճամբայ մը երևնալ: սակայն չեն կրնար ազդու ըլլալ: Կարեւոր բանը անձնական հոգեւոր կեանքն է: Անոր պէտք է հոգ տանիլ: Դուն և ես եթէ կրնանք անկեղծօրէն Քրիստոսի նմանիլ, երկուքս ալ բնականօրէն նոյն ոգին կ'ունենանք և կրնանք միասին գործել և եկեղեցի մը կազմել:

Անհատին ազատութիւնը և եկեղեցիին կազմակերպութիւնը. ահա ամէնէն կարեւոր հարցերէն մէկը որուն առջև կը գտնուին ժողովական եկեղեցիները: Խնչպէս կարելի է որ անհատն ազատ ըլլայ և միեւնոյն առեւն եկեղեցական կազմակերպութիւնը պահպանուի: Այսօր այս հարցին առջև կը գտնուին մեր Հայ Ժող. Աւետ. եկեղեցիները: Նոր տեղերու և երկրներու մէջ կը զբոսնուինք: Նոր կազմակերպութեանց հետ կը յարաբերինք, և ասոնք կ'ազդեն մեր վրայ: Ամէն կողմէն նոր հովեր կը փռւն մեր վրայ, և ասոնք կ'ազդեն մեր վրայ: Դուրսէն նորանոր ապրանքներ կը ներածուին մեր մէջ: Մեր այս զաղկթական և թշուառ վիճակին մէջ իսկ Ամերիկայի մեր բարեկամները առանց մտածելու կ'ուզեն մեր մէջ մտցնել հիմնապաշտութեան և արդիապաշտութեան խնդիրը, որ ամերիկեան ապրանք մըն է: Անոր համար ալ զբամ, ժամանակ և ոյժ կը վատեն: Կը գտնուինք անանկ ժամանակի մը մէջ ուր շատ իմաստութեան, լոյսի և զգուշութեան կը կարօտինք: Իբր Ժող. Աւետ. Եկեղեցի մեր մեծ ժողովուրդը կորսնցնելու վտանգին առջև կը գտնուինք: Անհատին ազատութիւնը և հոգեւոր կեանքը մեր թանկագին ժողովուրդներն են, և պարտինք պահպանել զանոնք: Մեր եկեղեցիներուն մէջ ամէնէն մեծ և հարուստ մարդուն, և ամէնէն զիտուն անձին հետ միասին ամէնէն պզտիկ և աղքատ, և

ամէնէն հասարակ մարդն ալ կատարեալ ազատութիւն ունի կարծիք յայտնելու: Ինչ մեծ ժառանգ է այս: Սակայն աւելի մեծ պարտականութիւն մը ունինք, որ է Քրիստոսով անկեղծ սէր, ճշմարտութեան լուրջ պատրաստակամութիւն, և ճշմարիտ խոնարհութիւն, Քրիստոս մեր գլուխը ճանչնալով: Ազատութիւնը մեծ բան է, պարտինք պահպանել զայն: Սակայն չմոռնանք որ սէրը աւելի մեծ բան մըն է: Չատ զատ գաղափարի տէր ըլլանք, սակայն

չաճապարենք զատապարտել մեզմէ տարբեր մտածողները: Եկեղեցին Քրիստոսի սիրոյն վրայ հիմնուած է, չմոռնանք որ Անոր վերջին պատուէրն է. «Սիրեցէք զիրար ինչպէս ես սիրեցի ձեզ»: Եթէ այս մոռնանք՝ կը կործանենք Քրիստոսի եկեղեցին: Եթէ զայս կատարենք՝ կը շէնցենք զայն: Ո՛րքան պէտք ունինք ասոր այս գաղթակայաններու մէջ: Այս է ահա մեր կոչումը. հաւատարիմ մնանք ասոր, և աշխատինք ասոր համար:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ՎԵՐ. ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ազգասիրութեան զանազան սեռերուն մէջ (Տես Ն. Աւետ. Դ. տարի թիւ 1-2 էջ 13) ամէնէն աւելի սխալ հասկըցուածը և արհամարհուածն է Քրիստոնեական Ազգասիրութիւնը: Ծառերուն մտքին մէջ բնաւ տեղ չունի անիկա: Նոյն իսկ՝ քրիստոնէութիւնը շատերուն համար հակասութիւնն է ազգասիրութեան: Հերիք է որ ոեւէ մէկը լրջօրէն հետաքրքրուի կրօնքով, և անկեղծօրէն ջանադիր ըլլայ հետեւելու անոր սկզբունքներուն, հերիք է որ ոեւէ մէկը մեղքի, արդարութեան, փրկութեան և յաւիտենական կեանքի վրայ կը ճառէ, անմիջապէս անպիտան մարդոց ու ցանկին մէջ կը զետեղուի անոր անունը, որմէ իբր թէ ոչ մէկ իրական ծառայութիւն կրնայ սպասել ազգը:

Մինչդեռ, ընդհակառակը, ազգին իրական և կենսական կարօտութեանց համար քրիստոնեայ ազգասէրին մատուցած ծառայութեան բաժինը ամէնէն հիմնականը և ամէնէն օրհնաբերն է:

Քրիստոնեայ ազգասիրը ազգին զաւակները իրենց հոգեւոր ժառանգութեան կ'առաջնորդէ, որով անոնց կեանքը անհրաժեշտ

աւելի կը նոխսանայ ու կ'ազնուանայ: Կեանքի մասին նիւթապաշտական տեսութիւն մը կայ, ըստ որում մարդը ոչ այլ ինչ է, բայց քաղաքակրթեալ անասուն մը: Ամէն բան նիւթ է, հետեւաբար անտեղի է փնտռել իրականութիւն մը կամ արժէք մը որ նիւթէն տարբեր կամ անկէ աւելի բարձր ըլլայ: Ուստի կեանքի և յարակից ոեւէ բանի իմաստն ու արժէքը չափելու համար չափանիշն է մէկ կողմէն կանգունն ու կշիռը, ու միւս կողմէն զգայարանքները: Եւ հետեւաբար մարդուս բարձրագոյն շահն է լաւ ուտել ու խմել, և մարմնին միւս զգայարանքները գոհացնել: Եւ բնականաբար միայն այն բաները արժէք ունին, որոնք կը ծառայեն այս նպատակին:

«Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի»:

Յիշատի ալ ուրիշ տեսակ արժէք չատչի գտնուիր անոնց կեանքին մէջ, որոնք այդ փիլիսոփայութեան կը հետեին. գտնուածն ալ շուտով կ'անհետի: Հոն կարելի չէ գտնել ճշմարիտ բարեկամութիւն, հոգւոյ սրբութիւն, սէր և համակրանք. հոն չի գտնուիր տեսիլքը

կեանքի աւելի բարձր մարզերու. ոչ իտէալ կայ հոն ոչ ալ Աստուած, այլ ճապաղ նիւթական գոյութիւն մը սոսկ, ուր մարդ բանտարկուած է իր եսին մէջ, և չլիւթալուած իր կիրքերուն:

Քրիստոնէութիւնն է որ կ'ազատէ մարդս այդ գերութենէն, և կուտայ անոր իրական կեանքը, հոգիին կեանքը, փարթամ՝ հոգեւոր աշխարհի վերոյիշեալ բոլոր թանկարժէք գանձերով: Քրիստոնէութիւնը կ'ընդլայնէ կեանքի շրջանը Անհունին հետ անմիջական հաղորդութեան մէջ դնելով մարդը, և ապրեցնելով անոր մէջ Աստուծոյ կեանքը: Այսպէս, առաջինին մէջ մարմինն է որ կ'ապրի, իսկ քրիստոնէութեան մէջ մարմինն հետ միասին՝ մանաւանդ հոգին է որ կ'ապրի:

Այս է քրիստոնեայ ազգասէրին օժիտը իր ազգին. անիկայ Աստուծոյ կը ճգնի ազգին հոգին ապրեցնելու: «Մարմինը առանց հոգիի մեռած է»: Այդ պատճառաւ ամէն ուր որ հոգին զանց կ'առնուի՝ հոն կարելի չէ գտնել իրական խաղաղութիւն, հիմնական յառաջդիմութիւն և իրական ուսեւեական վաճառք: Ինչպէս անհատ մը նոյնպէս ալ ազգ մը արժէքաւոր բան մը չահած չըլլար, եթէ ամբողջ աշխարհը վատուի և իր հոգին կորսնցնէ, քանի որ այդպէս՝ մեռեալն իւր փոխարէն իրական և անմահ կեանքը չահած կ'ըլլայ ան:

Քրիստոնեայ ազգասէրը հոգ կը շնկի որ ազգային գործերը առողջ սկզբունքներու վրայ հիմնուին եւ ըստ այնմ կոտորակուին: Ըսել չենք ուզեր որ քրիստոնեան, քրիստոնեայ ըլլալուն համար՝ անպատճառ աւելի լաւ քաղաքագէտ կ'ըլլայ բառին հասարակ առումովը: Բայց այլապէս ինչ կերպով ալ տնօրինուին գործերը՝ քրիստոնեայ ազգասէրը կը պնդէ որ արդարութեան և ճշմարտութեան սկզբունքներուն վրայ հիմնուին անոնք. քանզի անիկա քաջ համոզուած

է որ «Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ. բայց միզքը ժողովուրդին անարգաւք է»: Այսպէս քրիստոնեայ ազգասէրը ազգային ոնէ պաշտօնեայի կամ ժողովի ընտրութեան պարագային՝ խնամիրական հաշիւներէ և կուսակցական նեղմտութիւններէ հեռի՝ անկեղծօրէն ջանք կը թափէ որ ամէնէն արժանաւորները ազգին մէջ գործի զուստ անցնին: Ազգային իրադարձութիւնները զնահատելու կամ քննադատելու կը մղուի ան միմիայն արդարութեան և ճշմարտութեան հիման վրայ: Քրիստոնեայ ազգասէրը կը ջանայ որ բոլոր խնդիրները ազգին մէջ՝ լուծուին արդարութեան և ճշմարտութեան ըսկզբունքներուն համաձայն, ըլլան անոնք անհատներու միջև և կամ տարբեր կուսակցութեանց և հոսանքներու միջեւ, երբ կը ջանայ արդարութեան և ճշմարտութեան ի նպաստ հանրային կարծիք ստեղծել, արդար փրփակաւտով: Նոյնպէս միջազգային յարաբերութեանց մէջ:

Հակառակ պարագային զեղծուել, կոշտակիրութիւնը և անիրաւութիւնը փտախտի պէս չուտով կը տարածուին ազգին մէջը և անոր մահը կը փութացնեն: Ամէնէն աւելի քրիստոնեայ ազգասէրն է որ ազի պաշտօնը կատարելով արգելք կ'ըլլայ փտութեան, և առողջութիւն ու կեանք կը ներարկէ ազգին շրջերէն ներս:

Այսպէս Եղիա և Երեմիա մարգարէները, և իրենց ազգանուէր նմանները, իրր անոյնանքները ճշմարտութեան և արդարութեան, ինչ թանկագին ազգասէրներ էին Խորայէլի մէջ: Երանի թէ հրեայ ազգը անսար անոնց խորհուրդներուն. այն ատեն որչափ աւելի փառաւոր պատմութիւն մը պիտի ունենար ան: Ի պատասխան Աքաաբի այն հարցումին թէ «Խորայէլը նեղութեան մէջ ձգողը զո՞ւն ես» Եղիա որչափ ար-

դարացիօրէն պատասխանեց. «Խորայելը ես չնեղեցի, հապա դուն ու քու հօրդ տունը, քանզի Տէրովը պատուիրանքները թողուցիք ու Բահադլիմի ետեւէն գացիք:» Աքաար կը պանծար դրացի ազգերուն վրայ իր յաղթանակներով, բայց չէր գիտէր թէ ճշմարտութեան և արդարութեան Աստուածը լքելով ազգին ողնայարը ջախջախած էր:

Քրիստոնէայ ազգասէրը կը ճգնի ազգին զաւակներուն քսած ևկարագիր տալու, զանոնք ճշմարիտ մարդեր ընկող: Ասիկա ինքնին ամենաընտիր ծառայութիւնն է որ երբեք կրնայ մատուցանել ազգին. քանի որ ամէնէն մեծ օրհնութիւնը մարդ ըլլալուն մէջն է. ամէնէն մեծ պատիւը ճշմարտասէր, անկեղծ, քաղցրաբարոյ, ուղղամիտ, պարտաճանաչ, քաջ և ազնիւ նկարագրի տէր մարդ ըլլալուն մէջն է: Ամէնէն բարձր արժանիքը հոն է:

Բայց այդ ամէնէն զատ՝ ճշմարիտ ազգասիրութեան ալ խորիւրդ ճշմարիտ մարդկութեան մէջն է: Մարդ ինչ որ պիտի ըլլայ՝ նախ ճշմարիտ մարդ ըլլալու է: Ընտիր ատաղձէն կարելի է շինել լաւ գրասեղան, լաւ աթոռ, լաւ պահարան ևն. բայց եթէ ատաղձը գէշ է՝ ինչ որ ալ շինուի անկէ գովելի չկրնար ըլլալ: Մարդն է ատաղձը: Կեղծ և աննկարագիր մարդ մը ինչ որ ալ ըլլայ, բժիշկ, արհեստաւոր, մտաւորական, ազգասէր՝ չկրնար ընտիր և արժանաւոր տեսակէն ըլլալ: Ըճմարիտ մարդու նկարագրով շօթողած ազգասէր մը, որչափ որ ալ զգացումով նուիրուած ըլլայ իր ազգին՝ անոր կը պակասին անկողնութիւն, յարատեւութիւն, քաջութիւն, միաբանութիւն և գործակցութիւն, որոնց ամէնն ալ կենդանի և ազգին արդիւնաւէտ կերպով ծառայելու համար: Քանի քանի «թուեղ ազգասէր» ներ ազգային ճգնաժամերու ատեն՝ ցաւալիօրէն իրենց անանկու-

թիւնը ցուցադրած են սոյն ոսկեղէն յատկութիւններէն:

Արդ ճշմարիտ մարդու նկարագրիւր ամէնէն աւելի քրիստոնէական միջավայրին մէջը և Քրիստոսի ծունկերուն քովը կ'ստացուի: Անիկա մասնաւորապէս քրիստոնեայ ազգասէրին նպաստն է ազգին:

Քրիստոնէայ ազգասէրը սիրելը կը սորվեցնէ ազգին զաւակներուն, և այսպէս կարելի կ'ընէ որ ազգասէր ըլլան անոնք. քանի որ ան՝ որ սիրելը չի գիտեր չի կրնար իր ազգը սիրել: Սիրել՝ իր անձէն դուրս ելլել և ուրիշներուն համար զոհուիլ, անոնց կեանքին մէջ ապրիլ կը նշանակէ: Ան որ ուխտած է միայն իր անձին համար ապրիլ՝ ի՞նչպէս կրնայ ազգասէր ըլլալ: Այդ չէ՞ միթէ պատճառը, որ շատ մը կարծեցեալ ազգասէրներու ազգասիրութիւնը միշտ ալ վերաբան կը մնայ. անոնք կը կարծեն թէ կը սիրեն իրենց ազգը, երբ չեն հետաքրքրուիր ազգին անհատներուն ցաւերովը, կ'արհամարհեն զանոնք, չեն սիրեր նոյն իսկ իրենց ազգականները եւ երբեմն ալ իրենց ընտանիքին անգամները: Ասոնց համար չեն ուզեր դրամ, ժամանակ և հանգիստ զոհել, մինչդեռ բարձրօրէն կը խանդավառուին «ազգ»ով և «ազգային խնդիրներ»ով. նման այն ազնուական Ռուս տիկինին, որ ի լաց փլծկեցաւ, երբ տեսաւ հերոսի մը երեւակոյտական մահը թատրոնի մէջ, ներկայացման մը ընթացքին, մինչդեռ երբ դուրս ելաւ՝ սառած գտաւ իր իսկ կառապանը, զոր բռնադատած էր սպանել փողոցին մէջ: Ալ խնդրէ բոլորովին դուրս կը մնայ սիրել իր քաղաքական կամ այլ հակառակորդները, հոգ չէ թէ ազգին շատ կարեւոր մէկ հատուածը կ'ազդեն անոնք. մարդիկ ծիծաղելիօրէն կ'երազեն լաւ ազգասէրներ ըլլալ ոչ թէ միայն չսիրելով, այլ բոլոր ուժով ատելով հանդերձ զանոնք: Զէ՛, կարելի

չէ ազգասէր ըլլալ երբ մարդ իր հօին մէջ բանտարկուած է և սիրելի չի գիտեր:

Բայց մարդ իր բնական վիճակին մէջ անձնամոլ է: Քրիստոնէութիւնն է որ ճշմարտապէս սիրելը կը սորվեցնէ, և քրիստոնեայ ազգասէրն է որ իր կեանքին ուժովը թէ բարձրօրէն կը սիրէ իր ազգը, և թէ ալ սիրել կը սորվեցնէ անոր զաւակներուն՝ առաջնորդելով զայն սիրոյ աղբիւրին:

Ընթերցող, սիրէ՛ քու ազգդ. ամէնէն մեծ առաքինութիւններէն մէկն է ազգասիրութիւնը: Բայց մի՛ մոռնար որ չես կրնար քու ազգդ սիրել ճշմարտապէս, ազգուօրէն, գերադրապէս, մինչև որ Քրիստոնէն չսորվիս ճշմարտ սէրը և սիրելը, եւ իրական արժէքները կեանքի մէջ, եւ չգօտեպնդուիս Անոր կեանքին սկզբունքներովը իրապէս ծառայել կարենալու համար քու ազգիդ:

ՔԼԷՄԱՆՍՆԵՐԸ

Գրեց՝ ԲԻԻՋԱՆԴ Մ. ԵՂԱՅԱՆ

— Հը՛շշ, Քաթեարալի զանգակները...

— Տօն՛կ—Տինկ տանօ՛—Տօն՛կ—

— Ժինկլ ձլինկ—Տինկ տանօ՛—Տօն՛կ—
—Տինկ տանօ՛—ձլինկլ ձլինկ— Տօն՛կ

Օրհնութեան և ազօթքի ամբողջ հարաժտութիւն մը, որ անձանօթ աշխարհներէն հասնող բարձրակոչ աւետումներու պէս, եւ հեռաւոր ու խորունկ արձագանգներով կուգայ լիցնելու մթնոլորտը, արթնցնելու վերաթըռիչ զգացումներ, եւ սրտերը սրբելով՝ խոկման և ազօթքի հրաւիրելու մարդիկը: Հրաշալի բան է որ պարզ մետաղը այսքան յուզել կարենայ հոգին:

* *

Ժընեւի կեդրոնը կը բարձրանայ բլուր մը, ուր կառուցուած է հին քաղաքամասը, իր նեղ՝ աստղաձև փողոցներովը եւ աւերած պարիսպներովը: Բլուրին գաղաթէն դէպի վեր կը խոյանայ ցից, երկնակատար աշտարակը Ս. Պետրոս Քաթեարալին, որ կ'իշխէ ամբողջ քաղաքին վրայ՝ իր հսկայ զանգուածներովը և բարձրագոյն դիրքովը: Այս այն եկեղեցին է ուր քարոզած է Կալվին: Դեռ հոն է իր բեմը:

Աշտարակին վրայ կան շատ մը զան-

գակներ, տարբեր մեծութիւնով, տարբեր ձուլուածքով և ձայնի այլապէս լիւնջներով: Մին ունի ջինջ՝ զօրաւոր հնչիւն մը, միւսն կը կանչէ զիլ ու զուարթ ձայնով մը, նման թռչնիկի մը ճռուողիւնին, ուրիշն ունի ծանր ու հանդարտ զարկ մը որ կշռոյթ ու չափ կուտայ միւսներուն: Եւ բոլորին զօգանչը, իրարու խառնուելով կը յօրինեն քաղցր ներգաշնակութիւն մը որ բերկրութեամբ կը թոթոսցնէ այլեւր:

Բայց անոնց մէջ կայ մէկ հատիկ մը, հին զանգ մը, որ բոլորովին քաջատիկ առիթներով միայն կը ղողանչէ: Քլեւանսն է այն, «Գթութեան Զանգը»: Հոս զանգակներն ալ անուն կ'առնեն: Վերջերս Սէն Կալի մէջ նորակառոյց եկեղեցիի մը զանգակներուն տրուելան զանազան անուններ. մէկունը «Սիլվիոս-տանք», միւսինը «Սէր», մէկայինը «Սաղազութիւն», չորրորդինը «Ցնծութիւն» եւ այլն:

Հին ատենները Ժընեւի Քլեմանսը կը հնչէր երեսփոխաններու ընտրութեան ժամանակ: Հատիկ հատիկ կը հնչէր ան, ընտրողներուն յիշեցնելով մէկ կողմէն՝ որ իրենց քուէներովը փնտռեն ճշմարտ արժանիքը եւ ճշ-

մարիտ մեծութիւնը միայն, եւ միւս կողմէն՝ ընտրութեանը ալ յիշեցնելու որ իրենք կ'ընտրուին ո՛չ թէ փառքի, այլ ծառայութեան համար, որ իշխանութիւնը իրենց ձեռքը կը տրուի՝ յօգուտ հասարակաց աշխատելու համար միայն:

Քլէմանսը կը հնչէր նաեւ երբ երեսփոխանական ժողովի նիստը գումարուէր: Մինչդեռ երեսփոխանները ներսը կը վիճաբանէին ու որոշումներ կուտային, ան վերէն՝ ընդհատուած այլ կանոնաւոր բարախումներով զանոնք կը յորդորէր առողջուած մնալ ճշմարիտ հայրենասիրութեամբ, իրենց դատողութեան մէջ ըլլալ խոհական ու կշռաւոր, և մասնաւորական ամէն գաւառանքէ ու շահէ գերադաս բռնել հասարակական շահերը:

Դարձեալ, երբոր Ատեանը դատաւարութեան մը մէջ ըլլար, Քլէմանսը կը հնչէր, այս անգամ ծանր՝ երկարող թունով մը, հատ հատ, վայրկեանը մէկ անգամ միայն: Իր ղօղիւնը կը սաւառնէր ամբաստանողական ու պաշտպանողական բոլոր ճառերու վերեւէն, յիշեցնելով դատաւորներուն՝ չչեղիլ ճշմարտութենէ, գործադրել արդարութիւնը, այլ մանաւանդ գութով մեղմացնել իրենց վճիռները: Հաստատ ու բամբ ձայնով մը կ'ըսէր ան. «Դուք որ ձեր նմաններէն մէկը դատելու նստած էք, հոգ տարէք որ ձեր դատաստանը ըլլայ խղճի մտօք, եւ ձեր ձեռքերը ըլլան մաքուր: Երկիւղածութեամբ դատեցէք ձեր եղբայրը: Ո՞վ որ անմեղ է, թող ան նետէ առաջին քարը»:

Այս է պատճառը որ այդ գոնգակը կոչուած է Գրուքիւն—Քլէմանս—երկնատուր այն զգացումը որ կը հաւասարակըչոէ մտածողութիւնը եւ «կը բարեճըչէ արդարութիւնը», ինչպէս պիտի ըսէր Շէյքսպիր: Այսպէս՝ դաբերով հնչած է Քլեմանսը, սուրբ երկիւղով հա-

մակելով հողիները, որպէս տրոփումը ճշմարտութեան՝ Արդարութեան՝ Գթութեան Սրտին:

* *

Արդի ժամանակներու մէջ Քլէմանսը չի հնչէր ո՛չ երեսփոխանական ընտրութեան, ո՛չ ժողովներու, ո՛չ ալ Ատեանի նիստին ատեն: Պիտի ըսէիք. արդեօք պատճառը ա՞յն է, որ ճշմարտութեան՝ արդարութեան՝ գթութեան սէրը ա՛յնքան խորունկ չազուեր տարրայեր է մարդոց սրտին մէջ, որ անոնք այլեւս պէտք չունին զանգակներու յիշեցնելուն... Չեմ գիտեր թէ ուրիշ տեղերու քլէմանսները ի՛նչ կ'ընեն. բայց Ս. Պետրոսի Քլէմանսը լուռ չի մնար: Արդի աշխարհն ալ առիթներ ունի անոր ձայնը լսելու:

Օր մը խորապէս տպաւորած է զիս Քլէմանսը: Նոր Տարուոյ առթիւ էր ան, կաղանդի Գրիշերը: Հոս սոփորութիւն է որ կաղանդի իրիկունը մարդիկ եկեղեցիէն վերադարձին՝ արթուն հրակին մինչեւ կէս գիշեր, նոր յոյսելու սեմին վրայ ողջունելու համար՝ Նոր Տարին:

Հինգ վայրկեան մնացած է կէս գիշերին: Լէմանի բերանը՝ մեծ կամօր-ջին վրայ հաւաքուած ենք: Կը սպասենք շունչերնիս բռնած ու որտեղիս սեղմած: Ոչ ոք կը համարձակի լռութիւնը խզելու: Սաստիկ ցուրտ մը կայ որ ոսկորները կը սառեցնէ: Երկինքը՝ սակայն՝ հայելիի պէս պայծառ է, հիւսիսային հովը քշեր տարեր է ամպերը: Միտքս կը յանձնուի խորհուրդներու— «Հի՛ն» տարի «Նո՞ր» տարի: Տե՛ն, ի՛նչպէս երկինքի կատարէն վարսահեցաւ ասուպ մը. չափեց երկնակամարին կէօը և ինկաւ մարեցաւ լճին վրայ: Ա՛յդ է նշանը Հին Տարուան անցնելուն, Բայց ո՞ւր է Նորին նշանը: Ծուրջս իրերը նոյնը կը մնան: Բնութեան մէջ ոչ մէկ փոփոխութիւնը կը տեսնեմ:

Նոյն օգն է որ կը շարունակեմ շնչել. նոյն անտարբերութեամբ կը սահի ժամանակը. աստղերը նոյն բաց խփումով կը պլպլան. Լէմանը նոյն հանգարտութեամբ կը քնանայ: Ժամանակը ո՛չ «Հին» ունի ո՛չ «Նոր»: Մենք ենք, մենք, խեղճերս, որ մեր սահմանաւոր մտքի ըմբռնումին համեմատ չափ ու սահման յարմարացուցած ենք ժամանակին վրայ, որ ո՛չ սկիզբ ունի ո՛չ վախճան: Վարը՝ կամուրջի ներքեւէն ջուրերը նոյն յուշիկութեամբ կը սահին կարծես հեղճեղու համար մտքիս անշահ թափառումները, և օրինակ կուտան որ նորը փոփոխում հինին մէջ, միայնութիւնը՝ մշտահոսութեան մէջ, և անկորնչակալնը փոփոխութեան մէջ, ինչպէս որ ջուրերը նոր նոր կը փոխուին բայց գետը նոյն հին գետն է միշտ:

Մինչդեռ այսպիսի լուռ մտածումներ կը պաշարեն զիս. յանկարծ ահեղագոյ ու գըղգալից ձայն մը կը բախի ամբողջ մարմնոյս կարծես—Տլա՛անկ... նկ...նկ—ու կը թռթռայ, հետզհետէ աւելի կը մեծնայ, օդին մէջ կը ծաւալի, կը տարածուի, կը բազմապատկուի այնքան անպամ՝ որքան արգիւք կը գտնէ առջեւ, եւ հեռաւոր անդունդներէն արձագանգող մռնչիւնի մը պէս կը երկարի ու կը լեցնէ ամէն անկիւն: Կը զգամ որ բան մը օդը պատռելէն կուգայ ու ներգործիչ ոյժով մը մէջս կը թափանցէ, կը զգամ որ ժամանակի հսկայ դռները կը բացուին և անկէ նոր բան մը դուրս կը խուժէ աշխարհիս ամէն կողմերը:

Շուրջս զեռ լուռ է ամէն մարդ: Ամէնքս ալ կը ջանաք գգացումները կարդալ իրարու դէմքին վրայ: Կը սպասենք բանի մը որ միայնէ մեր բաժնը՝ առ խորհուրդները: Եւ ահա նոյն բարձրահնչակ գոչումը—Տլա՛անկ...

—Գնա՛ց հինը, եկաւ նորը.

—Տլա՛անկ...

Եւ կը սկսի ներդաշնակ զօղանչներու երաժշտութիւն մը որ կը ցնծացնէ եթերքը:

—Տլա՛նկ—Տինկաա նո՛—Տո՛նկ—

Ճինկլ ձլինկլ—Տլա՛նկ—Տինկաա նո՛—

Ճինկլ—Տո՛նկ—ձլինկլ—Տա նո՛—Տլա՛նկ...

Ժամանակի գաղտնիքն է որ կը լուծուի քլէմանսներու թակերովը: Նոր տարուան իմաստը կը պարզուի անոնց բարձրահնչակ աւետիսին մէջ: Անոնց երաժշտութիւնը մտքէս նահանջել կուտայ ամէն խոկմունք եւ հոգիս անձնատուր կ'ընէ սուրբ երկիւղածութեան մը որ նման է պաշտամունքի: Տարակուսանքը վերածուած է վստահութեան. Քլէմանսները յայտարարած են որ Տարին նոր է, նոր է այն իմաստով որ նոր անդրադարձանք այս իրողութեան, այսինքն հինը եւ նորը մի՛ր մէջն են, նորը շարունակուելն է հինին: Խորհուրդը պարզուած է: Կեանքը վերսկսած է արդ. սրտերը, որ քիչ առաջ թափուր բաժակներու կը նմանէին, կը սկսին լիցուիլ փառքի, բերկրանքի կաթիլներովը: Շուրջս մարդիկ նոր էակներ դարձած են. երազները ծնունդ կ'առնեն, նորին սէրը կը պարտէ ամէն սիրտ. արդ՝ ողջագոյութեամբ, համբոյր, մաղթանք:

Քլէմանսը նորին աւետարելն է:

Անգամ մը Քլէմանսը անակնկալ մը ըրաւ: Նոյեմբեր 11-օրը, ժամը 11-ին, Զինագաղարի 11-րդ տարեդարձին առթիւ, երբ աշխարհ 2 վայրկեան լուռ պիտի կենար պիտի հնչէր նաեւ Քլէմանսը: Առաջին անգամն էր որ Զինագաղարի յիշատակին պիտի հնչէր ան: Օրեր առաջ թերթերը ծանուցին: Ամէն ինչ պատրաստ. աշտարակին վրայ բաշխուի թեղիք անցուած են, ոպէսդի հեռու գտնուողներն ալ լսեն զայն:

Ժամը 11ին 2 վայրկեան կայ: Ոստիկաններու նշանին վրայ յանկարծ կը դադրի երթեկութիւնը, կանգ կ'առնէ փողոցներու մարդկային հոսանքը. թըրամուէյները չեն սուրար. օթոնները չեն շարժիր. քաղքին եռուզեռը մարած է. կարծես քարացեր է մոզական հպումով մը: Միայն Լէմանի ալիքները չեն դադարիր. կ'ուռին, կ'ուռին ու շառաչմամբ հզօր քները կը ձեռնեն—խըժժ, խըժժ:

Լոռութիւն, աւելի՛ լոռութիւն, խաղաղութեան օդին է որ կը սաւառնի աշխարհիս վրայ: Ատի՛նն է. պէտք է հնչին քլէմանսները. հի՛մա, ա՛յս իսկ րօպէիս...

Քլէմանսները լուռ են սակայն: Բուպէները կը սահին, լոռութեան երկու վայրկեանը կը լրանայ, բայց քլէմանսները չեն հնչեր: Ոստիկանները վերջապէս կուտան նշանը, եւ քաղաքը վերստին կեանք կ'առնէ: Տեսարանը կ'սկիւրուի որ դադար առած էր: Ամէն անիւ կը սկսի գառնալ: Մարդիկ կը վերադառնան իրենց գրադուսին, կէս մը յուսախափ, կէս մը խորհուրդի մէջ մնացած—ինչո՞ւ չհնչեցին Քլէմանսները:

Պիտի ըսէք որ նախախնամական էր Քլէմանսին լոռութիւնը: Պիտի ըսէք որ ա՛ն ալ ազօթեց, միայն թէ այս անգամ լուռ: Պիտի ըսէք որ զթութեան զանգին լոռութիւնը բողոք մըն էր ընդդէմ կեղծ խաղաղասիրութեան այս աշխարհին, որ ամբողջ տարուան մէջ միայն 2 վայրկեան օտքի վրայ լուռ ու գլխահակ կը յարգէ խաղաղութեան ուխտը, մինչ մնացած բոլոր օրերու՝ ամիսներու մէջ կը խանդարէ այդ խաղաղութիւնը: Պիտի ըսէի որ ան հեգնեց մարդոց արուեստական, արարողապաշտ խաղաղասիրութիւնը: Կամ պիտի ըսէի, որ երբ խաղաղութեան Ոդին կ'անցնէր երկրէ երկիր, Քլէմանսը չուզեց խանգարել

աշխարհի լոռութիւնը, և կամ, որ ա՛ն ալ բոլոր աշխարհին հետ յարգեց լոռութիւնը, որ պայմանն էր Զինագաղարի յիշատակութեան:

Այսպիսի կամ տարբեր մեկնութիւններ պիտի երեւակայէի Քլէմանսի այնօրուան խորհրդաւոր լոռութեան մասին, եթէ չիմանայի որ անոր պատճառը եւեկտրական հոսանքի խանգարում մըն էր միայն, մարդոց կողմէ եկած արտաքին արգելք մը:

Մարդկային ամէն տաճարին մէջ, ամէն սրտի մէջ քլէմանս մը կայ: Ես գիտեմ իմ քլէմանսներս: Ձեմ կրնար ըսիլ թէ ո՛ւր կը գտնուին անոնք. բայց կը լսեմ անոնց ձայնը, մերթ յանդիմանական ու երկիւղազոռ, մերթ բերկրալիւր, մերթ վստահութիւն ներշնչող, մերթ աւետիս տուող, մերթ հերոսութեան մղող, բայց միշտ բան մը յիշեցնելու վրայ: Եւ երբեմն ի՞նչ անուշ ներշնչականութեամբ կ'երգեն անոր օսկի շրթները. անգործութեամբ կը համակեն հոգիս, որ պահ մը թեթեւցած սլացք կ'առնէ դէպ ի վեր, ու վստահութեան դօտին կ'անցունեն շուրջս: Կը գիտակցիմ որ կա՛յ վերջապէս բարձրագոյն բարւոյն՝ զթութեան և արգարութեան իրականութիւնը, ուրիշ ոյժ ու նշանակութիւն կը ստանայ կեանքը: Երբեմն ալ կը լսեն քլէմանսներս. ու կը գտնեմ որ իրենց ուժի հոսանքին հաղորդիչը լաւ չեմ հաստատած. յանցանքը իմ է: Բայց գիտեմ որ միշտ հոն են անոնք, բարձր թառած հոգւոյս աշաւրակին վրայ՝ իրենց ազգարար ձայնովը ուղղելու՝ խրախուսելու գիւս:

Ժողովուրդներն ալ, ազգերն ալ ունին իրենց ներսիդին քլէմանսներ: Աշխարհն ալ ունի իրենը, զետեղուած անտեսանելի՝ երկնակատար աշխարակի մը վրայ: Այդ քլէմանսները կը խօսին աննիւթական զօրութիւններու լեզուով: Ոհ, ի՞նչ պիտի ըլլար վիճակը աշ-

խարհի, եթէ առ միշտ լուսին քլէմանս-
ները, Խաւարի գունդերը համարձակ
ասպարէզ պիտի լինէին ու լիցնէին հը-
րապարակները իրենց գէնքերու զո-
խալուր թնդիւններովը:

Արթնցէ՛ք, արթնցէ՛ք արդ, ո՛վ աշ-
խարհի Բլէմանսները, եւ ձեր քաղցր
նուագներովը մեղմացուցէք խժական
խղուրտիւնը այս աշխարհի խաժա-
մութիւն: Տուէ՛ք աշխարհիս աւետիսը
խաղաղութեան, յորդորը զթութեան,
կշիռը արդարութեան, լոյսը ճշմար-
տութեան, չափը իմաստութեան: Ա-

զատ ու համարձակ բարձրացուցէ՛ք ձեր
կոչը. վասնզի ձեզմո՛վ կը յայտնուին
տիեզերքի ճշմարիտ ձայները. վասնզի
աշխարհ միշտ պէտք ունի ձեր հնչում-
ներուն. վասնզի առանց ձեզի խաւար է
ամէն ճամբայ, քար է ամէն սիրտ:
Հնչեցէ՛ք ուժգին, հատ հատ, անտիզի-
տալի ու թափանցող թաթառմներով,
մինչեւ որ լեռները ցնծան ձեր արձա-
գանդներովը, մինչեւ որ պայթի գարե-
րու սիրտը եւ արդարութիւնը հոսի ինչ-
պէս մարգերուն մէջ վառկները գար-
նան:

1930-Ի ԳԻՏԱԿԱՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՄՆԵՐԸ

ՔԻՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Քաղեց՝ ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Նորահնար մեթոտով մը կարելի ե-
ղաւ արտադրել արուեստական մետաքս
եւ ուրիշ նիւթեր՝ ջուր եւ երկթթուի գ բը-
նածուխի (carbon dioxide) բաղադրու-
թեամբ: Առաջին քայլն է ենթարկել
ջուր եւ երկթթուի գ բնածուխի բաղա-
դրութիւնը անգրմանիչ աղային ճա-
ռագայթներու (ultra violet rays) ուրկէ
կ'արտադրուի համադրական (synthetic)
շաքար: Հասարակ պակտէրիաի մը
յաւելումով շաքարը կը վերածուի խոր-
շանիւթի (cellulose):

Կասկազործի կասկէն (malt) ար-
տադրուած պակտերիաները աւելցնելով
փշրուած ընկոյզէ, փոշի կրաքարէ եւ
ջուրէն բաղկացած խառնուրդի մը մէջ
եւ դնելով օդախից թխոցի (incubator)
մը մէջ շուտով մը՝ պակտերիաները
բազմապատկուելով ընկոյզի իւզը դուրս
կուտան:

Պէրլինի մէջ Տոքթ Կրիւզ աչքէ ան-
ցուց շիշ մը որ պարապ թողուած էր
3300 (ն. Բ.) տարիներէ ի վեր: Քննե-

լով շիշը ճշգրեց փարաւոններու համար
պատրաստուած գարեջուրի խմորի
(yeast) տեսակը:

Տոքթ. Ալիսըն Միացեալ Նահանգաց
երկրագործական բաժինէն՝ ստուգել թէ
կապոյտ կանանչ լոռ բոյսը (algae) բնա-
կան արեւի լոյսի ենթարկութեամբ մը-
նայուն կը զարձնէ բորոկածինը (nitro-
gene) իսկ արեգակի լապտկայութեան
պահուն ասիկա կարելի կ'ըլլայ շաքար
աւելցնելով վրան:

Նոր գտնուած մեթոտով մը՝ սկսաւ
արտադրուիլ բամպակի հունտի կեղեի
թիփէն փայտաշաքար մը (zylos sugar),
որ խմորուելով կը փոխուի ալքոլի, ա-
սիթոն լաքղիք եւ ասիթիք անուէն թը-
թուններու, եւ նոր սկսուած է գործածուիլ
ներկերու եւ ուտեստեղէններու գոյն
տալու, իսկ բորակածինի հետ կիրաւ-
կուելով կը պատրաստուի ահարկու
պայթուցիկներ:

Ամենաընտիր մետաքսի թելերէն
երկու քուէէս անգամ աւելի բարակ թե-

լերով մեծաքանակությամբ արտադրել քիմիական գիտությունը 1930 թ. միջոցին:

Ֆիմիական գիտությունը սկսած արտադրել կորեկի անգործածելի մասերէն քարի չափ կարծր տախտականման առաջ մը:

Գիտության համալսարանի քիմիական տները հնարեցին նոր համադրական ռետին (չամ սաղարը) մը, տախկայ քսէլով թանձր խաւաքարտներու վրայ, սկսած յառաջ գալ անբեկանելի ֆոնոկրաֆի արձանագրւոյն (Records):

Կրկին քիմիական գիտությունը յաջողեցաւ շինելու բազալթիւն մը՝ որ չաքարէն 690 անգամ աւելի քաղցր է:

Ամերիկեան քիմիականները ձգախէժէ (Rubber) արուեստական բերեղներ կրցան շինել:

Խմորը (yeast) անգրամանիչակային ճառագայթներու հետ կիրարկուելով սկսած է աւելի ուժեղ կերպով արգելք հանգիստանալ ոսկրաթեքութեան (Rachitis) քան կովու կաթը:

Տկսակ մը լուսարձակ չօգտւած հրնարուեցաւ առանց աւրուած ըլլալու չօգտւածի համը:

Քիմիական գիտությունը ստուգեց թէ կենդանիները մեծնալու համար կենսամին (A) էն կ'առնեն ստեպոլինէն (carotin) բոյսերու գեղին նիւթերէ:

Տոքթ. Պուլթինանդ յաջողեցաւ սեռային «հորմոն»ը (hormon) գոտ քիւրեղային ձեւով պատրաստել եւ սկսած փրօճիսոն (brogynon) անուան տակ ծախուիլ:

Ռաքֆէլըր հաստատութիւնը կրցաւ գտնել կաթի մէջ գտնուած այն անձանօթ նիւթը, որուն միջոցաւ կ'արգիլուի մանրէներու աճումը:

Լէմոնի հիւթը կիրարկուելով ջրածնաքլորական թթուի (hydrochloric acid) հետ, սկսած է 14 ամիսներ պահել հակալնտահարական (antiscorbutic) յատկութիւնները:

Պաղեցուցիչներու մեքենաները կըրցեր են հնարել նոր ոչ-թունաւորիչ եւ ոչ-զիւրավառ պաղեցուցիչ ելեկտրական կազմը. այս կազմ յառաջ կուգայ քարաքլորիդ (tetrochloride) եւ ծարիրձորինիդի (antimony) fluoride միացումով:

Քաղախային աշենիդ շոգին պտուղներու անմնաս ըլլալով, սկսած են մեղցնել թործ (spore) բորբոս եւ սունկերը որոնք կը փճացնեն ծառերու պտուղները:

Հէլըմ կազմ սկսան մենաքարի (monozite) աւազէն արտադրել:

Միացեալ Նահանգաց Երկրագործական բաժինը տեղեկացուց որ քիչ քանակութեամբ մանիշի (iodine) յաւելումը հողին՝ կ'արտադրէ ճութ եւ առաջնակարգ տեսակէ ծխախոտ:

Նոր տեսակ մը հացագործի փոշի (baking powder) հնարուեցաւ, որ եվուած հաց կամ քէյքերու մէջ տէժ մնացորդ չի թողուր եղեր, ասիկայ կը պատրաստուի ասիթոն տայքարաքլորիլ քասիտէն (acitone dicarboxylic acid):

Կարմիր Խաչը 10,000 Զուլցերիական ֆրանք յատկացուց այն գործնական կերպին՝ որու միջոցաւ կրնայ մարդ գործնականապէս երեան հանել ճրուղը կէզ (mustard gas) կոչուած պատերազմի խիստ թունաւոր կազմ:

Ստուգուեցաւ որ Ճաքոնի պարող մուկերը աւելի զգայուն են, յայտնիլու մասին միաթթուիդ բնածուխի (carbon monoxide) գոյութիւնը քան գեղձանիկը:

Ըստ Միացեալ Նահանգներու Էլկրազործական պաշտօնէութեան քիմիական տները գտան որ կարմիր մկնասորի (ատա սօղանը) առնէտներու ղէմ լուսագոյն թոյներէն մէկն է:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Աշխարհի գիտութեան արձանագրած ամենամեծ ասուպը Ափրիկէի մէջ գըտնւած է: Այս 14 ոտք երկար ասուպը կը բաղկանայ նիքիլէ և երկաթէ և 80 թօնոյի չափ կը կշռէ: Ասուպը բաց գետնի վրայ գտնուած է և կը կարծուի որ մի քանի տարի առաջ երկինքէն ինկած է:

1928 ին Ափրիկէի հարաւային կողմը ասկէ պզտիկ հատ մը գտնուեցաւ: Բայց այս երկուքը շատ փոքր կը մնան այն ասուպներուն քով որոնք կը թուի թէ Սիպերիոյ և Արիզոնայի մէջ ինկած են մեծ փոսեր բանալով:

Յարգ մարդիկ չէին գիտեր Եգրուրական ցեղին ծաղուժը և անոնց ուրկէ գալը և Խաւիթոյ մէջ հաստատուիլը: Բայց մօտերս Յունական ծովուն վրայ գտնուող Լէմնոս կղզին պեղուեցաւ եւ երեւան ելաւ գերեզմանատուն մը որ Եգրուրացուց կը պատկանի: Գտնուած զանազան առարկաներէն հնագէտներ կը փաստեն թէ Եգրուրացիք Խաւիթա գաղթելէն առաջ հոս բնակած ըլլալու են:

Յիմարները ջերմով կը դարմանեն: Ամերիկացի նշանաւոր հոգեբոյժ զիտուն մը ուղեղի այլասերում ունեցող հիւանդներու վրայ կատարած փորձարկութիւնով մը կըրցած է անոնց 16ը բուժել: Ապաքինումը կատարուած է ելեքտրականութեամբ, արուեստական ջերմի ենթարկելով հիւանդը: Մի քանի պարագաներու մէջ ջերմը բարձրացած է 106 աստիճանէն վեր և 3 ժամ պահուած է այդ տաքութիւնը:

Նոր պեղում մը կը ցուցնէ թէ Քանանացիներ գործածած են իրենց յատուկ քաները:

Այբուբենի նշաններ երեւան ելան մօտերս երբ Քանանացուց երկիրը պեղուեցաւ: Այս նշանագիրները փորա-

գրուած են հողէ ամաններու վրայ և կը թուագրուին 2000-1600 (Ք. Ա.): Յարգ Պաղեստինի մէջ այսքան հին նշանագիրներ չէին գտնուած:

Մեքսիքոյի մէջ ճամբայ կառուցանող զինուորներ երբ ցամքած լիճմը կը փորէին յանկարծ երեւան ելան նախապատմական կուռքեր, որոնցմէ մէկը հովի աստուած է: Ուրիշ առարկաներ ալ գտնուած են որոնք կը փաստեն թէ՝ շատ հին ատենները հող մեծ քաղաքակրթութիւն մը կար:

Հարիւրապետ Մալքոն Քէմփպէլ մօտերս առաջինը հանդիսացաւ ինքնաշարժով արագութեան մէջ: Յարգ ունէ մարդ չէր կրցած այսքան արագ քշել: Ինք մէկ վայրկեանի մէջ չորս մղոն կը քշէ:

Անգլիոյ մէջ զաղտնաբար յօրինուած է սաւառնակ մը որ կրնայ երկու հարիւր մարդ փոխադրել: Այս օգնաւոր մասնաւորաբար շինուած է պատկառամբ համար պայթուցիկներ փոխադրելի Չինաստան: Այս հսկայ օդային մեքենան 20 թօնօ տարողութիւն ունի եւ կ'ըսուի թէ ամենէն մեծ սաւառնակի թիւը ունի: Սաւառնակը կը քշուի երեք մեծ շարժիչ մեքենաներով:

Տիթրոյթի համալսարանին մէջ փորձ մը կատարուեցաւ տեսակ մը որդի վերայ: Երբ այս որդիը մագնիսական ուժին ենթարկուեցան, տեսնուեցաւ որ անոնք կ'սկսին արագօրէն յաջորդաբար ծնիլ և բազմանալ: Իսկ երբ մագնիսական զօրութիւնը վերցուցին որդիը իրենց առաջուայ վիճակին պէս մնացին առանց կրկին բազմանալու:

Գիտուններ ելեքտրական ոյժով աշխատող տեսակ մը աղբիւր կառուցին: Երբ ծարաւի մէկը անոր մօտենայ ինքնաբերաբար աղբիւրին ծորակը կը բացուի և երբ անկէ հեռանայ ինքնաբերաբար կը գոցուի:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԱՌԹԻԻ

Այս պատմական դէպքը կատարուեցաւ Բերիոյ Ս. Բառասուն Մանկանց Եկեղեցւոյ մէջ, 26 Ապրիլ 1931, Կիրակի օրը: Օծման հանդիսութեանց արտաքին ճոխութեան, փայլին նկարագրութիւնը ուրիշներու կը թողում: Ես միայն առած տպաւորութիւններս կ' ուզեմ համառօտիւ արտայայտել:

Առաջին ազդու տեսարանը պարզուեցաւ բոլոր հանդիսականներուն առջև երբ Տ. Բարպէն Սրբազան ծուներ դրաւ և ուխտին գիրքը ձեռքը առնելով անկէ կտրեց օրոշ արտասանութեամբ, ծանր և յուզուած ձայնով և առաջի Աստուծոյ և եպիսկոպոսներու և Եպիսկոպոսապետին, ինքզինքը նուիրեց Տէրոջը գործին և ազգին ծառայութեան: Այն վայրկեանին ո՞վ կարող էր ինքզինքը զսպել և իր սրտի խորերէն չաղօթել ըսելով, «Տէր դուն ծառագ հաստատ պահէ իր ուխտին մէջ ցկեանս և ամէն կերպով սաղանդաւոր այս ծառայիդ կեանքը արդիւնաբեր ըրէ՝ Բու փառքիդ և իր հօտին համար»:

Երկրորդ ազդու տեսարանը: Երբ Ս. օծումը կատարուեցաւ աղաւթի մը բերնէն Ս. իւզին անոր զխուռն վրայ հասելով և եպիսկոպոսաց կողմանէ անոր ձեռնադրութեամբ, ծերունազարդ վեհ. Սահակ Բ. Կաթողիկոս առաւ հոգեւոր իշխանութեան գաւազանը և յանձնեց իր աթոռակիցին և կաթողիկոսական մատանին անցուց անոր մատը և ապա անոր ճակատը համբուրեց և անոր գլուխը քողարկեց: Ի՞նչ տեսարան էր այս, ի՞նչ խորհրդաւոր էր անոր իմաստը. ի՞նչ անյուզողդ կամք, ի՞նչ շրջահայեաց միտք, ի՞նչ անկեղծ սիրտ, ի՞նչ անձնուրաց հոգի, ի՞նչ խոնարհութիւն նախախնամութեան կարգադրութեան առջև, ի՞նչ մեծ հոգիի արտայայտութիւն: Աննախանձ նկարագիր:

Հայ մտաւորականներ, երիտասարդներ, կրօնքը յերկարածոյ բան մը, ցոյց մը, երեւակայական պատկեր մը չէ, նա իրականութիւն է: Անոր հոգին մարմնացած է մեր հոգեւոր Հայրապետին անձին մէջ: Անոր այս արարքով յայտնուած իր կեանքը, իր նկարագիրը չէ, այլ երկնային հովուապետին հոգին, կեանքը և նկարագիրն է:

Երրորդ անմոռանալի դասը սորվեցանք Գեր. Թորգոմ Արքեպս.ի քարոզէն: Սրբազանը իբր բնարան առած էր՝ Յիսուսի երիցս կրկնած հարցումը՝ ուղղեալ Պետրոս Առաքեալի: «Զիս կը սիրե՞ս» իր խօսքը շարունակելով ըսաւ թէ երեք անգամ ականատես եղած է թէ Յիսուս Տ. Բարպէն Սրբազանին ալ սոյն հարցումը ըրած է: Մին 36, և միւսը 18 տարիներ առաջ և երրորդ անգամ ալ հոս: Եւ Տ. Բարպէն Սրբազան երեք անգամին ալ խօսքով և գործով պատասխանած է. «Այո՛, Տէր, դուն գիտես թէ ես Բեզ կը սիրեմ» Գեր. քարոզիչը յուզուած, յստակ և ազդու կերպով պարզեց հանդիսականներուն թէ ազգ մը, անհատ մը, եկեղեցի մը կրնայ ապրիլ կենդանի Աստուծոյ հաւատալով: Շեշտեց թէ Հայ ազգը կը ապրի և պիտի ապրի իր հաւատքովը: Ահա համառօտիւ պատգամը Թորգոմ Սրբազանի իմաստալից քարոզին:

Սիրելի ազգս, այս պատգամը Բրիտտոնէական կրօնքի կեդրոնական ճշմարտութիւնն է, և մեզի յոյս կը ներշնչէ թէ մենք ալ պիտի ապրինք:

Ազգերու պատմութեան մէջ մէկէ աւելի անգամներ պատահեր է որ նոյն հոգեւոր աթոռին վրայ մէկէ աւելի պետեր բազմած են: Սակայն անոնք կոխով, ատելութեան և նախանձի հոգիով լիցուած, գիրար նվոված և շատ արիւնհե-

ղութեանց պատճառ եղած են։ Մեր ներկայ աթոռակից հայրապետներուն պարագան այսպէս չէ։ Անոնցմէ մին հայր և միւսը որդի է։ Որդին կ'աթոռակցի հօրը, անոր սիրովը, հաւանութիւնովը և ինքնաբուզի փափաքովը։ Անոնք իրարու խորհրդակից, զործակից և կարեկից ըլլալով իրենց տառապեալ հօտին պիտի օգնեն, անոր համար պիտի ազօթեն, զայն պիտի հովուեն և արթուն պիտի պահեն։

Այս երկու սիրելի հայրապետներուն

սէրը, համերաշխ գործակցութիւնը մեծ օրհնութիւն մ'է ազգին համար։ Սակայն միայն տսով մեր վէրքերը չեն բուժուիր և մեր ցաւերը չեն վերջանար։ Այլ, երբ ազգին անհատները, հաւանածները, լոյսը զատակարգերը իրենց երկու կաթողիկոսներուն աննման օրինակին հետեին և անոնց հոգեւոր հովանաւորութեան տակ իրենք ալ միաբան, համերաշխ և սիրալիր գործակցութեամբ ապրող ազգ մը ըլլան՝ այն ատեն մեր յոյսերը կ'իրականան։ ***

ՍՈՒՐԻԱ ԵՒ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Երկրի մը հարստութիւնը կ'որոշուի հետեւեալ չորս բաներէն մէկուն եւ աւելին գոյութեամբը — երկրագործութիւն, վաճառականութիւն, հանքեր և ճարտարարուեստներ։

Սուրիոյ հողերը յարմար եւ պէտք եղած կերպով չեն ոռոգուիր, հետեւաբար մեր երկրագործութենէն հիմակուանէն աւելի բան մը չենք կրնար ակնկալել։ Յետպատերազմեան պայմաններու բերումով մեր արտաքին վաճառականութիւնն ալ գոհացուցիչ ըլլալէ շատ հեռի է։ Մեր ներածուծը արտածումին կրկնապատիկէն աւելի է։ Շահագործելի հանքեր ալ չունինք։ Այնպէս կը խորհինք որ Սուրիա իր յոյսը և զործունէութիւնը պէտք է ճարտարարուեստի վրայ կ'ազդուեցնէ, որոնց մեզի կարելի ճիւղերն են հետեւեալները։

Օճառաշինարիւն։ Այս երկրին մէջ օճառը կը շինուի սոտայի կամ նման կալաքարային նիւթի մը հետ անխառն ձէթի բաղադրութեամբ, հոս ձէթի առատութեան պատճառաւ։ Երբ իւզը կալաքարային նիւթի մը հետ կը միանայ, իւզի մէջ գտնուող քաղցրինը (կլէսէրին), բաղադրութեան չի մտնիր։

Եւրոպոյի օճածագործները մասնաւոր մեքենաներու միջոցաւ զայն օճառէն կը զատեն, եւ այս կերպով մեծ շահ կ'ապահովեն։

Եւրոպայի մէջ լուացքի օճառը շինելու համար շատ ստորին եւ աժան տեսակէ իւզեր կը գործածեն, եւ այս պատճառաւ զանոնք շատ աժան կըրնան ծախել։ Մենք ստորին տեսակէ իւզեր չունինք, հետեւաբար մեր նախական եւ ոչ-պիտական օճառաշինութիւնը թողլով քուալիթի օճառ պատրաստութեան ձեռնարկելու ենք։ Այս տեսակ օճառները փոխանակ անկրկնաւոր շինելու պէտք է գործածութեան յարմար ձեւով պատրաստելին, հրապուրիչ հոտ եւ զոյն պէտք է ունենան եւ գեղեցիկ թուղթի մէջ փաթթուելով տուփերու մէջ պէտք է գրուին։

Շաքար շինել։ Շաքարը ճակնդեղէ եւ շաքարիդէղէ կ'արտադրուի։ Ճակնդեղը 15 առ հարիւր շաքար կը պարունակէ, եւ երբ ան ջարդուելով ջուրի մէջ եռացուի անոր պարունակած շաքարը ուրիշ նիւթերով միասին լուծեալ վիճակի մէջ կը գտնուի։ Ասիկա նախ կիրի միջոցաւ կը մաքրուի, ապա երկթուրի գրնածուխի միջոցաւ կ'իրը

գուրս կը հանուի: Շաքարի նիւթը կը ճերմկցուի եւ օգտախից կաթսաներու մէջ եռացուելէ ետքը մեր գիտցած մաքոր շաքարը կ'արտադրուի:

Շաքար շինելու համար շատ նիւթեր կան Սուրիոյ մէջ: Դժուարութիւնը ճակնդեղի եւ շաքարեղէցի լուծոյթը շոգիացնելու մէջ է: Եթէ շոգիացումը սովորական ճնշումի տակ կատարուի սա վտանգը կայ որ ջուրը չշոգիացած շաքարը ածխանայ: Այս պատճառաւ ճնշումը ցած աստիճան պէտք է ունենայ: ճնշումը որչափ որ քիչ ըլլայ այնքան ալ շուտ կ'եռայ:

Ածուխ շինել: Եթէ փայտը առանց օդի տաքցուի մեր սովորական ածուխը կ'արտադրուի, ինչպէս որ ամէնուն ծանօթ է: Երբ փայտը այս կերպով կը տաքցուի թանկագին շատ մը կազեր թռչելով կը կորսուին: Այս կազերը կրնան պաղ ընդունարաններ առաջնորդուելով խտացուիլ եւ հեղուկներու վերածուիլ, եւ այս կերպով կարելի կ'ըլլայ խալիրթոյի, ասփրոն ասփի եւ ասփրիֆ ասփի ի—որ քացախի է՛ն կարեւոր մասը կը կաղմէ— նման շատ օգտակար նիւթեր արտադրել, ինչպէս որ կ'ընեն Եւրոպա:

Սիւնեք շինել: Փայտէ շէնքերը այրելու վտանգին ենթակայ են, քարէ շէնքերը շատ սուղ կ'արժեն. այս պատճառաւ սիւնեթը յեղաշրջում յառաջ բերած է շինութեան մէջ: Կ'երեւի թէ Հռոմէացիք սիւնեթը գործածած են, հետեւաբար մենք զայն վերագտած ենք միայն: Սիւնեթը կը շինուի կրաքարէ եւ կաւէ, որոնք ամէն տեղ առատօրէն կը գտնուին: Այս երկուքը կը փոշիացուին եւ իրարու խառնուելով ջուրով կը շաղուին: Այս խառնուրդը փուռի մէջ 1500 աստիճան կը տաքցուի, եւ պաղելէն ետքը անոր մէջ քիչ մը գաճ կը խառնուի եւ գարձեալ կը փոշիացուի:

Սիւնեթ շինելու համար շատ զիւ-

րութեամբ կարելի է նիւթեր գտնել, զժուարութիւնը 1500 աստիճան տաքութիւնը յառաջ բերելու համար պէտք եղած ածուխը ձեռք ձգելն է:

Մօտերս Դամասկոսի մէջ ընկերութիւն մը կազմուած է սիւնեթ շինելու համար: Ապագան պիտի ցուցնէ թէ ան որչափ պիտի յաջողի:

Ներկարարութիւն: Բուրդը եւ մետաքսը կենդանական նիւթեր են եւ իրենց քիմիական բաղադրութեան (protein) պատճառով դիւրութեամբ կը ներկուին: Իսկ քթանը եւ մանածը բուսական են եւ խորշանիւթէ (cellulose) կը բաղկանան, հետեւաբար ներկը անոնց վրայ դիւրութեամբ չի փակիր. եւ որպէսզի անոնք ներկը առնեն մակարկիչ (mordant) նիւթեր կը գործածուին, որոնք ընդհանրապէս երկաթի կամ անագի աղեր են: Զարմանալին սա է որ նոյն ներկը տարբեր մակարկիչ նիւթերով տարբեր գոյն կուտայ: Այս մասին կատարուած գիտական հետազոտումները եւ անոնց կիրարկումը այս արհեստը մեծապէս պիտի յառաջացնէ:

Արեւելքի մէջ առարկաները տարիներ առաջ կը ներկէին բուսական արմատներէ արտադրուած ներկերով: Զօր օրինակ հանրածանօթ կարմիր աղիզաւի ներկը սորոնի արմատէն կ'արտադրուէր: Իսկ հիմայ այս ներկը քիմիական բաղադրութիւններէ կ'արտադրուի: Քիմիական ներկերը ամէն օր նօրյարգ եւ արժէք կ'ստանան իրենց տուած արդիւնքներուն պատճառաւ:

Լեղակը Հնդկաստանէն կ'արտածուէր աշխարհի ամէն կողմը: Այս ալ հիմա քիմիական միջոցներով կը պատրաստուի. եւ այս պարագան թէպէտ լեղակի պատրաստութեամբ զբաղող երկրագործներու գործը քանդեց, եւ սակայն, այսօր շատ աթան գիւնեթով, նոյնիսկ նախապատերազմեան արժէքին կէս գինովը արուեստական լեղակ կը ծախուի:

թէ տորոնի և թէ լեղակի բոյսերուն մը-
չակումին համար գործածուած ընդար-
ձակ հողերը այսօր ուրիշ օգտակար նը-
պատակներու կը գործածուին:

Ներկայիս մեր երկրին մէջ ներկ ար-
տադրել կարելի չի թուիր. և սակայն
կարելի է և գիւրին է ներկարարութիւ-
նը յառաջացնել՝ օգտուելով նոր գիւ-
տերէն և աժան գինով ծախուող ներկե-
րէն:

Կաշեգործութիւն: Այս երկրին մէջ
մեծ կարելիութիւններ կան այս արհես-
տը զարգացնելու համար: Մենք մօր-
թերը աժան գիներով Եւրոպա կը ղըր-
կենք և բարձր գիներով զանոնք վերըս-
տին այդ տեղէն ծախու կ'առնենք:

Դամասկոսի մէջ ուրախ ենք որ տե-
ղական ընկերութիւն մը կազմուած է
այս ճարտարարուեստը յառաջ տանելու
համար: Ուշ գնելիք մի քանի կէտեր:

Մօրթագերծումը և մօրթերու պահ-
պանումը գիտական և առողջապահա-
կան մեթոտներով պէտք է կատարուին:

Խաղախորդարանները հիմակուանէն
շատ աւելի մաքուր պէտք է ըլլան:

Գործածուած ազը երկաթի անմաք-
րութիւններ պարունակելուն համար կա-
շին բժաւոր կ'ելլէ:

Յղկումը և փայլեցնելը Եւրոպական
մեքենաներու միջոցաւ պէտք է ընել:

Պօլ Հայ Սֆուլ

Հայկա

Պ. ԷՋՐԱԳ

ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՒԵՏ. ԿԵԱՆՔԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Նիկոսիաբնակ Տիար Յովհաննէս Եղե-
կիէիանի նամակէն կը քաղենք. —

Վեր. Սիրական Աղապապեան Նիկոս-
իոյ Աւետ. Եկեղեցիին հովիւ ձեռնադ-
րուելէ վերջ իր հովուական այցելու-
թիւններով ժողովուրդը մխիթարած և

հոգեշունչ քարոզներով զայն հոգեւոր
արթնութեան մղած է, որուն նշանները
սկսած են տեսնուիլ: Վեր. Ս. Աղապա-
եան կազմակերպած է 25—30 երկսեռ
անդամներէ բաղկացեալ Ե. Ք. Ջանիյ
Ընկերութիւն մը:

Վեր. Աղապապեանի գործունեութիւնը
սահմանափակուած չէ միայն Նիկոսիոյ
մէջ. ան կ'այցելէ նաև շրջակայ վայրե-
րը: Ամէն շաբաթ օրը կը մեկնի Լաու-
նաքա, ուր կայ 20 տուններէ բաղկացե-
ալ Աւետ. Ժողովուրդ մը: Կիրակի
աւտուան կրօնական պաշտօնը հոս կա-
տարելէ վերջ կը վերադառնայ Նիկո-
սիա, նոյն օրուան կէսօրէ հաջորդ
պաշ-
տօնը կատարելու: Կ'այցելէ նաև Փա-
մակուսթան, ուր կը գտնուի 20 տուն
հայեր, որոնց երկուքը՝ Բողոքական:
Հոս թէպէտ Հայերը ունեն հոգեւոր պաշ-
տօնեայ և եկեղեցի չունին, բայց Նիկո-
սիոյ Առաք. Եկեղեցւոյ կողմէն քաց-
ուած երկսեռ վարժարան մը ունին:
Վեր. Աղապապեան անխտիր բոլոր Հայ
տունները կ'այցելէ, և ասկէ զատ Խալամ
հասարակութեան մէջ աւետարանչական
գործ կ'ընէ սրճարաններու և խանութ-
ներու մէջ ասոնց քարոզելով, անհա-
տական խօսակցութիւններով և թեր-
թիկներ ցրուելով: Խալամ հասարա-
կութիւնը լաւ ընդունելութիւն ցոյց
տուած է ասոր: Վեր. Աղապապեան այ-
ցելած է նաև Լիմասոլը ուր կայ 10
տուններէ բաղկացած Հայութիւն մը:
Նիկոսիայէ հոգեւոր պաշտօնեայ մը կը
զրկուի հոս տօնական օրերուն ժողո-
վուրդը մխիթարելու համար: Հոս ևս
կայ ազգային երկսեռ վարժարան մը:
Վեր. Աղապապեան այս տեղի բոլոր Հա-
յերը այցելած և Խալամ հասարակու-
թեան մէջ ալ նոյն կերպով աշխատած է:
Նիկոսիոյ «Աւետ. Վարչութիւնը՝ ընկե-
րակցութեամբ իր հոգեւոր հովիւին՝
բացառիկ այցելութիւն մը» տուած է
ժողովուրդին, հետաքրքրուած է ան-

հատներու հոգեւոր կեանքովը: Ապա չորս անձերէ բաղկացեալ այցելու մասնախումբ մը ընտրուած է, որպէսզի հոգեւոր շարժումը զօրանայ:

ՓՐՈՖ. Լ. ԼԵՒՈՆԵԱՆ կը գնահատուի: Այս համեստ երեւոյթով քրիստոնեան, իր իմացական կարողութեամբ եւ քրիստոնէական փորձառութեամբ, իբր ուսուցիչ, իբր աշխարհի մէջ աւետարանչական դատին նուիրուած լուռ բայց անխոնջ եւ արդիւնաւոր գործիչ, իբր խլամագէտ, արդար հռչակի մը տիրացած է շատ մը ընդարձակ շրջաններու մէջ: Ապրիլ 20-30ին Գահիրէ եւ Աղէքսանդրիա գտնուած է մասնակցելու համար կրթական եւ քրիստոնէական կարեւոր ժողովներու: Ամերիկեան Պորտը իր այս տարի հրատարակած *Guest-Book* անուն գրքին մէջ, բոլոր աշխարհիս վրայ իր գաշտերուն մէջ ամենէն կարեւոր գործունէութիւն յոյց տուած 30 անձերու կենսագրականները հրատարակած է: Ասոնցմէ մէկն է Փրոֆ. Լ. Լեւոնեան, որուն մասին հոն գրուած է. «Լեւոնեան մտաւոր եւ հոգեւոր առաջնորդութեան այնպիսի յատկութիւններ մշակած է, որոնք զինքը քրիստոնէութիւնը Իսլամներու ներկայնորդներուն մէջ առաջին շարքի վրայ կը դնեն»:

ՔԷՍԱՊԻ եկեղեցիին մասին կը գրուի.

Ապրիլ 5ին մեր Տէրոջ Բրիստոսի Յարութեան հետ տօնուեցաւ նաեւ Քէսապի Հայ Աւետ. եկեղեցւոյն յարութիւնը: Բասնընթը այր մարդիկ՝ 25էն 71 տարեկան, եկեղեցւոյ անդամ ընդունուեցան Վեր. Ե. Բասունիի կողմէ: Այսպիսի բան մը դեռ Քէսապի մէջ չէր տեսնուած. եկեղեցին բոլորովին լեցուած էր:

Այն անդամներուն Բրիստոսի վերայ իրենց հաւատքին, Անոր հետ իրենց

յարաբերութեան, և իրենց վերստին ծննդեան մասին երկու ամիս քննութիւն կատարուած էր թէ՛ հովիւին և թէ՛ եկեղեցական ժողովին կողմանէ:

Պաշտօնապէս՝ անդամակցութեան ուխտը եկեղեցւոյ դաւանանքը ընդունելէ ետք, իրենց անձնական հաւատամքը յայտարարեցին երգելով՝ իրենց փափաքով,

«Կիթտի գալպիմտէն տիւնեա վէ շանը,

Հէփ գորգուտան ազատ էթտի գանը.»

հոգեւոր երգը:

Ասիկա Աստուծոյ մասնաւոր այցելութիւնն է: Կ'աղօթենք որ իր Սբ. Հոգին ա'լ աւելի առատօրէն թափէ անոր կարօտող և տենջացող այս եկեղեցւոյն վրայ: Փառք իր Անուան:

ՏՐ. ԵՒ ՏԻԿ. Ճ. Է. ՄԷՐԻԼ Ապրիլ 29 ին քաղաքէս Ամերիկա մեկնեցան, մէկ տարուան արձակուրդը Ամերիկա անցընելու համար: Անոնք չոգեկալով պիտի ճամբորդեն Կ. Պոլիս ուսկից պիտի անցնին Աթէնք, ուր՝ Ամերիկեան Աստուածաբանական Ճեմարանին մէջ (*The School of Religion*) Տր. Մէրիլ դասախօսութիւններու շարք մը պիտի տայ: Մեծ բազմութիւն մը բարեկամներու, աշխատակիցներու և ուսանողներու ժամանակէն առաջ Պաղատի կայարանը փութացել էին հրաժեշտի ողջոյնը տալու այս անձայն բայց չարաչար աշխատող քրիստոնեայ գիտունին:

ՊԷՅՐՈՒԹԻ Աստուածաբանական Ճեմարանի սաներէն Պրն. Եուհաննա Տէր Մկրտիչեան *A. U. B.* ի Հայ Ուսանողական Միութեան 26 Մարտ 1931ին տեղի ունեցած բանախօսութեան մրցման մասնակցած է, և Միութեան առաջին մրցանակը, արծաթ շքանշանը, չհաճ է:

(Սեպհական Թղթակցութիւն Նոր Աւեստայի)


Եթովպիայի Մէնէշեան, որ հինգ տարիէ ի վեր հոն կը բնակէր, հետեւեալ տեղեկութիւնները հաղորդած է խմբագրութեանս. —

Եթովպիոյ հայ գաղութին կեդրոնն է Ատիս Ապպա, երկրին մայրաքաղաքը, որ ծովէն քէն (ձիպութի) շոգեկառքով երեք օր հեռու է, և ունի մօտաւորապէս 80 000 բնակչութիւն մը: Եւրոպական գաղութը գատ թաղամաս մը կը կազմէ: Հայ գաղութը՝ միայն Ատիս Ապպայի մէջ՝ կը բաղկանայ 1000 հոգիներէ, որոնցմէ 170ը Այնթապցի: Հայերուն մեծ մասը վերջին 15 տարիներու ընթացքին հոն գաղթած են և կ'ըբարդին առեւտուրով և արհեստներով: Հայերու մէջ կան երկու բժիշկներ, երկու գեղագործներ և փոքր թիւով կառավարական պաշտօնեաներ: Արքայական պալատան մէջ կարեւոր դիրք մը գրաւած է Տիար Աբրահամ Բէօրհաճեան, բնիկ Թալասցի մը, որ 30 տարիներ առաջ հոս հաստատուած է: Աւելի բժիշկներու, գերձակներու և կօշկակարներու տակաւին պէտք կայ:

Հայութիւնը տնտեսապէս հանգիստ և քաղաքականապէս ապահով վիճակի մը մէջ կը գտնուի. քաղաքը ծովու մակերեսէն 2400 մէթր բարձր է և այս պատճառով անոր կլիման տաք ձմեռ հաճելի մեղմութիւն մ'ունի: Հայ Առաքելական համայնքին համար եկեղեցական շէնք մը կը կառուցուի երկու տարիէ ի վեր: Երկու ազգային վարժարաններ կան, մէկը Ռամկավարներու խսկ միւսը Դաշնակցականներու հօկոթեան տակ: Հայ Աւետ. Ժողովուրդը կը բաղկանայ 18 ընտանիքներէ, որոնց մէջ կան գուլէճականներ և տնտեսական լաւ դիրքի տէր անձեր: Ասոնք կը փափաքին իբր եկեղեցի կազմակերպուիլ և քարոզիչ մ'ունենալ:

ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ Աղլմանեան, խմբագրութեանս հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէնորահաստատ ՀԱՅԵՆ գիւղի մասին:

Հայեր հոս հաստատուած են 1928-ի գարունը: Գիւղը կը գտնուի Ալէքսանդրէթի անկախ օանձագին մէջ Հարիմի մօտ, օթոյով մէկ ու կէս ժամ հեռու Հալէպէն: Հաստատուած ընտանիքներուն թիւն է 78՝ որոնք կը ներկայացնեն հայկական վեց նահանգները: Եկած թայց ապա հեռացած են 27 ընտանիքներ: Գիւղին առողջական ներկայ վիճակը նախկինին բաղդատմամբ լաւ է. մալարիան գրեթէ անհետացած է, Ունին երեք տարուան ծաղկոց մը, 71 աշակերտներով, որոնց կը դասաւանդեն երկու ուսուցիչներ: Ունին նաեւ փոքր գրադարան մը: Բոլոր տունները աղււսաշէն և միայարկ են: Ամէն ընտանիք միայն մէկ սենեակ ունի, ոմանք սկսած են երկրորդ մ'ալ շինել: Մերձաւոր Արեւիքի հիմնարկութեան (նախկին Րիլիֆի) պաշտօնեաներէն Միս Լէկ իր անձնուէր ծառայութեամբը սիրիլի եղած է բոլորին. ազնիւ Եանքուհին կը պահէ երեք սենեակներէ բաղկացած գարմանատուն մը, ուր կը խնամէ բոլոր հիւանդները: Անոր մեծ փափաքն է գիւղը հաստատուիլ: Գիւղին հողը արգասաբեր է, թէպէտ մինչև հիմա կատարուած ցանքերէն ակնկալուած արդիւնքը յառաջ եկած չէ՝ կարգ մը միջատներու պատճառաւ: Բայց հաստատութեան այս կարճ շրջանին միջոցին 49 հազար ծառեր տնկուած են, այնպէս որ գիւղը անտառի մը երևոյթը տուած է:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՊէՅՐՈՒԹ, Նոր Մարաշ գաղութին մէջ Ս. Բառ. Մանկանց եկեղեցիին հիմը դրուած է և հսն ներկաներուն մէջ հանգանակութեան մը ձեռնարկուելով 487.25 սուր. ոսկի, 12 ոսկի մատանի, 12 զոյգ օղ, 75 պարկ սիմէնթ, 50 կառք աւազ, 12 շապիկ, 10 օսմ. ոսկինոց սկիւն, ջրհան մեքենայ և այլն, ընդամէնը 1500 սուրի. ոսկի արժողութեամբ, նուիրատուութիւն եղած է:

ՀԱԼԷՊ Ի Ս. Բառ. Մանկանց եկեղեցիին զանգակատան ճակատը դրուած է գեղակերտ ժամացոյց մը, Զատիկ առթիւ նուիրուած երկրաչափ Սրշակ Գալէմքեարեանէ և իր երկու եղբայրներուն կողմանէ:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՌՈՒԻԷՆ ԷճՂԱՃԵԱՆԻ յիշատակին սգահանդէս մը կը կատարուի Պէյրութի Աւետ. Գերեզմանատունը, ներկաներուն մէջ 74 սուրիական ոսկի նուիրահաւաքութիւն մը կը կատարուի վայելուչ յուշարձան մը կանգնելու համար:

ՆԻԻ ԵՌՐԲԻ Հայ Աւետ. եկեղեցիին կողմանէ Մարտ 26 ին ճաչկերոյթ սարքուած է ի նպաստ շէնքին պարտքին որ է 22500 տոլար. մինչև հիմա շէնքին մէջ դրուած է աւելի քան 132 000 տոլար: Հացկերոյթին մասնակցած են 125 հոգի հինգական տոլար վճարումով:

ՏՈՔԹ. ՆՇՈՆ ԶԱՐԻՖԵԱՆ, Սոմփինեիի (Ֆրանսո) քաղաքապետը, մեռած է նոյն քաղաքին մէջ:

ՅՐԷՋՆՈՅԻ Պանդխտաց Հայ Ժող. եկեղեցիին Կանանց Բարեսիրական ընկերութիւնը, 1904ին հաստատուած, վերջին 20 տարուան միջոցին 14 500 տոլարի օգնութիւններ ըրած է, որուն 3 450 ը իր եկեղեցիին և ֆնացածը՝ պատասխանելով 60ի չափ տարբեր կոչերու:

ՊԱՂՏԱՏԻ մէջ, Հ. Կ. Խաչի հիւանդանոցի շէնքը աւարտած է, 490 բուպի ծախքով:

ԴԱԻՐԷԺԻ մէջ, 1930ի վիճակագրութեան համեմատ, 7500 Հայեր կան:

ՏԻԳՐԱՆ ԶԱՄԲԷՐԹԷՆ Հ.Բ.Բ. Միութեան նուիրած է 17000 անգլ. ոսկի, որուն եկամուտը պիտի յատկացուի ուսանողական անտուկներու և Կեսարացի Մկրտիչ Պալեան ևս 700 անգլ. ոսկի նուիրած է Միութեան:

ՅՈՎՍԷՓ ՓՈԽՇՄԱՆԻ, հայ նկարիչի, գործերուն մէկ ցուցահանդէսը Բէսէտինայի մէջ մեծապէս գնահատուած է տեղական մամուլի մէջ:

ՏԻԱՐ ԳԱՀՐԱՄԱՆԵԱՆ, Սանֆրանսիսքո բնակող Հայ կաթողիկոսաբնի մը, սարքուած եկեղեցական հացկերոյթի մը բոլոր ծախքերը իր քսակէն կ'ընէ, և եւ ծախուած 250ի չափ տոմսերուն գինը կը նուիրէ քաղաքին Աւետարանական եկեղեցիին «Իր իր մասնաւոր տուրքը»:

ՍԷՆ-ԼՈՒ (Մարսէյ) 400 տուններով հայ գիւղ մըն է, եկեղեցի, դպրոց և այլն կազմակերպութիւններ ունին: Շէն վիճակ մ'ունին:

Պ. ՃԷՎԱՀԻՐՃԵԱՆ, 75ամեայ կօշկակար մը, Տիթրոյթ, Կալկաթայէ հեռագիր մը կ'ստանայ, որ կ'աւետէ իրեն ՏՅ միլիոն տոլարնոց ժառանգ մը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ երեք Հայերուն կտակած 525000 տոլար գումարը, Պորտ Ընկերութեան քով կը գտնուի, կը գլխուի «Պայքար»ի մէջ:

ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ Հայ Առաք. եկեղեցին ունի ինը թեմեր, 10750 ժողովուրդ, սեպհական հինգ եկեղեցիի շէնքեր, 6 հովիւ, 7 հայկական վարժարաններ 450ի չափ աշակերտներով և 14 ուսուցիչներով:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազգայնագետ Գրիգոր Սիմոնյանի
գրություններին

ԿԼՈՒԽ Դ.

ՈՎԻՆԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆԸ

«Առաջնորդէ», ըսաւ Սքրուճ, «Գիւ-
շերը կը յառաջանայ, և գիտեմ որ աս
ժամանակը ինծի համար խիստ թանկա-
գին է, ուստի, ո՛վ Ոգի, առաջնորդէ
ինծի»:

Տեսիլքը դէպ յառաջ շարժեցաւ
ճիշդ այնպէս ինչպէս որ եկած էր, Սքրուճ
անոր զգեստին շուքին մէջ մնացած ա-
նոր հետեւեցաւ. իրեն անանկ կը թուէր
թէ այդ զգեստը զինքը վեր կը վերցնէր
ու դէպ յառաջ կը մղէր:

Հազիւ կը թուէր թէ տոնք քաղաքը
մտեր էին, որովհետեւ կարծես թէ քա-
ղաքն էր որ եկեր և աստիճանաբար
շրջապատեր էր զիրենք: Սա ստոյգ էր
որ հիմա անոնք ճիշտ քաղաքին մէջ-
տեղն էին, ուր սակարանը կը գտնուէր,
այստեղ վաճառականները ետեւզեոյի
մէջ էին, ոմանք կ'երթային, ոմանք
կուգային, ոմանց գրպաններէն զրամի
ձայն կուգար, ոմանք խումբեր կազ-
մած կը խօսակցէին, երբեմն ժամացոյ-
ցին կը նայէին, ուրիշներ մտազրաղ
կերպով կը խաղային իրենց ոսկի կնիք-
ներուն հետ, և այլն, ճիշտ այնպէս՝ ինչ-
պէս Սքրուճ շատ անգամ տեսած էր:

Ոգին կանգ առաւ առեւտրականնե-
րու փոքր խումբի մը քով, և Սքրուճ
տեսնելով որ ձեռքը գտնոնք ցոյց կու-
տար, անոնց մօտեցաւ որ մտիկ ընէ ի-
րենց խօսակցութիւնը:

«Ոչ», կ'ըսէր խոշոր գէր մարդ մը,
որ անգղին կզակ մը ունէր. «Ես այդ
մասին բան մը չեմ գիտեր, սա միայն
գիտեմ թէ մեռած է»:

«Երբ մեռեր է», հարցուց միւսը:

— Կարծեմ երէկ գիշեր:

«Վա՛յ, ինչպէ՞ս կրնայ մեռած ըլ-
լալ», հարցուց երրորդը, խոշոր առփի-
մը մէջէն հեծ քանակութեամբ քթախոտ
հանելով. «Ես կը խորհէի որ աս մարդը
բնաւ մեռնելիք չունէր»:

— Աստուած գիտէ, բնաւ առաջինը
յօրանջելով:

«Արդեօք դրամներն ի՞նչ ըրաւ»
հարցուց կարմիր երեսով պարոն մը, ո-
րուն քթին ծայրը մօի աւելորդ մաս մը
կար, որ հնդկահաւի քթին վրայինին
նման կը շարժէր:

— Չգիտեմ, ըսաւ խոշոր կզակով
մարդը, դարձեալ յօրանջելով, թերեւ
իր ընկերներուն թողուց, գոնէ ինծի չը
թողելէն լուր ունիմ:

Այս կատակարանութեան վրայ ա-
մէնքը մէկ խնդացին:

«Հաւանականաբար թողման ծախ-
քը շատ աժան ըլլայ», ըսաւ միեւնոյն
խօսողը, «որովհետեւ կ'երդնում որ
թողմանը գացող չը պիտի ըլլայ. ի՞նչ
կ'ըսէք, մենք երթա՞նք իրր կամաւոր»:

— Ես չեմ երթար, նոյն խնդիրն ա-
զդք ալ տան, յարեց քթին վրայ ու-
ռեցք ունեցող պարոնը, ստկայն եթէ
երթայի, անշուշտ ուտելիք պիտի ու-
զէի:

Դարձեալ ամէնքը խնդացին:

«Ձեր մէջ ամէնէն աւելի չհետա-
քրքրուողը ես եմ», ըսաւ առաջինը, ո-
րովհետեւ ես երբեք սե ձեռնոց չեմ
գործածեր, ոչ ալ աղողք կուտեմ, սա-
կայն կ'առաջարկեմ որ երթանք եթէ
երթալ ուզող կայ: Ինքզինքս իր բա-
րեկամներէն մին կը նկատեմ, քանզի իր
ողջ եղած ատեն երբ իրարու հանդիպե-
լիք, միշտ կը կենայինք խօսակցելու
համար: Ուստի պէտք է որ ես երթամ,
միայն քարով» (Շարունակելի) (29)

صاحب الامتياز والمدير المستول

القس ق. هاروتونيان